№ 87 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 24

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԷՐՈՒՆԻ

№ 87 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 24

Վարդուհի, Արմենակ և Արտաշէս Սանթուրեանցները, Հռիփսիմէ Դաւթեանցը, Զուարթ և Կարապետ Ցարութիւնեանցները, Նարինգիլ, Կասարինէ, Յովհաննէս, Սմբատ, Աւետիս և Մկրտիչ Դաւթեանցները ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր անժամանակի որդու, երկրորդները իրանց սիրելի քրոջ, երրորդը իր տալոջ, 4-դը և 5-դը իրանց քրոջ, 6-դը և 7-դը իրանց տալոջ աղջկայ, իսկ վերջինները իրանց քրոջորդի՝

ՀԱՄԱՍՓԻՒՌ ՍԱՆԹՈՒՐԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, ապրիլի 21-ին, կարճատև, բայց վաղաժամ մահը, որ տեղի կունենայ այսօր, չորեքշաբթի, ապրիլի 24-ին։ Յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, ապրիլի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից (Мельничный переул. д. № 5. Ночлежный пріютъ), դէպի Վանքի ժայռ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

(չ. հ.) 2—2

Նախազգուշացում

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ — Д. З. Сараджевъ

ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱ — СЕННЕКИЗ

Նորերս ի վաճառի է հանվել օղի (столовое вино)

„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ“ „Т-во Г. М. Сараджевъ“

ֆիրմայով և մերին կատարելապէս նման etiketներով, նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, մեր ֆիրմայի հռչակով օգուտվելու նպատակով։

Թողնելով դատարանին ապրանքի տարածման այդպիսի մի ձևի գնահատումը, գրաւնակը խնդրում է յարգելի հասարակութեան ուշադրութիւն դարձնել ֆիրմայի էտիկետների վրա անուան և հօրանուան սկզբնական տառերին, նոյնպէս գործարանի դրօշմի՝ «այծեամը ժայռի վրա»։

„Դ. Զ.“ „Д. З.“

(օ.մ.) առ. 25—12

Մարտի 16, կիրակի օրից

ԲԱՑ Է

Նկարիչ ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆԻ

ԶՈՒՏ

ԱԿՎԱՐԷԼՆԵՐԻ

Ցուցահանդէսը

Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.

Բարեատինսկայա փողոց։

Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։

Մուտքը արժէ 30 կոպէկ։

Աշակերտները և զինուորները վճարում են կէսը։

(օ. ժ.) առ. 20—15

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՏԱՃԱՐ

I

Մեր երկրի ոչ մի քաղաք և նոյնիսկ Թիֆլիսը, Անդրկովկասի այդ մայրաքաղաքը, որ համարվում է երկրի մտաւոր և կուլտուրական գլխաւոր կենտրոնը, չունի մինչև այժմ գեղարուեստի տաճար, մի այնպիսի հիմնարկութիւն, որտեղ հաւաքված լինէին նկարչութեան, քանդակագործութեան, անդրիագործութեան աչքի ընկնող նմուշներ։

Եւ կովկասեցին պէտք է կամ հեռաւոր հիւսիսային մայրաքաղաքները՝ Պետերբուրգ և Մոսկվա գնայ իր գեղարուեստական հետաքրքրութեանը և պահանջներին գոհացում տալու համար, կամ ճանապարհորդի արտասահման, որտեղ նա արդէն առատօրէն կը գտնէ իր որոնածը ոչ միայն մայրաքաղաքներում, այլ և բազմաթիւ ուրիշ քաղաքներում։

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան գործողները և ինտելիգենցիայի ներկայացուցիչները չեն կարող անտարբեր վերաբերվել դէպի այդ մեծ պակասութիւնը և պարտաւոր են ասպարէզի վրա դնել գեղարուեստի տաճար կառուցանելու խնդիրը։

Այդ տաճարը պէտք է նպատակ դնէ մի կողմից ձեռք բերելու համաշխարհային արուեստագէտների գործերի նմուշներ, որքան, ի հարկէ, հնարաւորութիւն կունենայ այդ անելու, իսկ միւս կողմից տեղ տալու իր կովկասեան արուեստագէտների ընտիր ստեղծագործութիւններին։

Եթէ մի 15—20 տարի սրանից առաջ Անդրկովկասում չը կային, կամ շատ քիչ էին նկարիչներ և քանդակագործներ, այժմ արդէն կան մի երկու տասնեակ հոգի, որոնցից մի քանիսը ցոյց են տուել տաղանդ և բարեխղճութիւն և որոնց ստեղծագործութիւնների մէջ կան այնպիսի նմուշներ, որոնք կարող էին հիմք ծառայել կովկասեան նկարչական ժողովածուի համար։

Այժմ, ինչպէս գիտէ մեր ընթերցողը, իւրաքանչիւր տարի տեղի ունեն Թիֆլիսում նկարչական ցուցահանդէսներ, որտեղ հանդէս են գրվում մի քանի տասնեակ, իսկ երբեմն և մի քսանի հարիւր պատկերներ։ Նրանց մէջ միշտ պատահում են մի երկու աչքի ընկնող գործեր, որոնք արժանի են առանձին ուշադրութեան և կարող էին մտնել կովկասեան ժողովածուի ցուցակի մէջ։

Եւ ահա քաղաքը կարող էր իւրաքանչիւր տարի մի յայտնի գումար յատկացնել լաւագոյն ստեղծագործութիւնների մի քանիսը ձեռք բերելու՝ գեղարուեստի տաճարի համար։

Եթէ քաղաքը ձեռնարկէր մի այդպիսի գործի, նրան կը սկսէին աջակցել և մասնաւոր անձեր, նուիրելով իրանց ձեռք բերած պատկերները թանգարանին։ Եւ մենք հաւատացած ենք, որ իրանք նկարիչները և քանդակագործները շատ ձեռնտու պայմաններով կը գիջէին քաղաքին իրանց ստեղծագործութիւնները և երբեմնապէս նոյնիսկ կը նուիրէին նրանց այս ու այն գործը։

Ինչու պէտք է մենք մի կենտրոնական տաճար չունենանք, որտեղ կարողանայինք տեսնել Զանկօվսկու վրձինի բնորոշ ստեղծագործութիւնները, որոնցով նա պատկերացրեց լեռնային Կովկասը իր ժայռերով, ձիւնակոյտներով, իր սառնաշունչ լեռնակատարներով և մշուշապատ ձորերով, Բաշինջաղեանի վրձինի այն գեղեցիկ գործերը, որոնցով նա պատկերացրեց Արարատը, Սևանը, մեր երկրի բնութիւնը, լուսնկայ գիշերները, Յակոբեանի բնորոշ և հիւթալից տիպերը, Քէթվաճեանի թէ խոշոր և տպաւորիչ տեսարանները և թէ գողտրիկ մանրանկարները, Զօտմերի արևակէզ հարաւը իր արևելեան խայտաճամուկ և գունեղ տեսարաններով, Թերլեմեզեանի զգացված ու մտածված բազմատեսակ գործերը, Թոփչէի գաղափարական թեմաներով մշակված պատկերները, Քոգելի ծովային գունեղ տեսարանները և այն։

Դնելով ասպարէզի վրա ներկայ խնդիրը՝ մենք կը ցանկայինք, որ այն անձերը, որոնք գիտակցում են գեղարուեստի նշանակութիւնը և գեղարուեստական տաճարի նպատակայարմարութիւնը, գործնական ընթացք տային խնդրին և հարատացնէին Թիֆլիսը մի կարևոր հիմնարկութեամբ, որի պակասը վաղուց զգացվում է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 22 ապրիլի

Արժանահաւատ աղբիւրներից Բէյտէրի գործակալութեանը հաղորդում են, որ հնդկական սահմանագլխում խրերի դրութիւնը բնաւ վտանգ չէ սպառնում. ապստամբական խառնիճաղանճ խմբերը նոյն վայրերի, անկարգապահ հրոսակախմբերն են, որոնք վերջերս կուի բռնվեցին զակակախել ցեղի հետ։ Նրանց թիւը 9000 մարդուց աւելի չէ։ Հիմք չը կայ ենթադրելու, թէ նրանք գործում են էմիրի համաձայնութեամբ, ինչպէս և հիմք չը կայ այժմեան դրութիւնը կապել անգլո-ռուսական համաձայնութեան նկատմամբ էմիրի ունեցած հայեացքների հետ։ Անհաւանական են ընդունում նաև այն կարծիքը, թէ շարժումը մեծ չափեր կընդունէ։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 23 ապրիլի

Բէյտերին հաղորդում են Սիմլայից, որ գեներալ Վիլկոկս ապրիլի 21-ին ոմբակոծեց աւազաններին Լանդիկոտալից դէպի արևմուտք գտնվող բլուրների վրա՝ հանդիպելով միայն աննշան դիմադրութեան։ Թշնամու զօրախմբի հրամանատարները փախան կուի հէնց սկզբում։ Աւազանները հալածվեցին սահմանից։ Անգլիացիները կորցրին մի օֆիցէր և 2 զինուոր վիրաւորված։

Հնդկական զանազան մաղարաջներ կառավարութեանն օժանդակիչ զօրքեր են առաջարկում։ («Հ. Գ.»)

—

Սիմլա, 23 ապրիլի

Հնդկաստանի հիւսիս - արևմտեան սահմանագլխի զանազան կէտերում այժմ մասամբ զինուորական ծառայութեան են կոչված, մասամբ էլ կանչվում են՝ 31 բատալիոն, 15 գունդ հեծելազօր և 64 թնդանօթ։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 23 ապրիլի

Ռուսաց դեսպանատունը Բ. Դրան ուշադրութիւնը դարձրեց այն հանգամանքի վրա, որ Սալոնիկում շարունակ ընդհարումներ են տեղի ունենում ցեղական վէճերի և երկպառակութիւնների հողի վրա և որ ոստիկանութիւնը միշտ էլ մատը մատին չէ կպցնում։ Մեծ վէզիրը խոստացաւ միջոցներ ձեռք առնել և հեռագրով համապատասխան հրաման արձակեց։

Դեսպանատունը Բ. Դրան ուշադրութիւնը հրաւիրեց նաև Վանում տիրող լարված տրամադրութեան, հայ ազգաբնակութեանը շարունակ սպառնալիքներ կարդալու և տեղական իշխանութիւնների անգործութեան վրա։ Մեծ վէզիրը խոստացաւ այդ մասին էլ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 23 ապրիլի

Մօնաստիրում թիւրքական դատարանը մահվան պատժի դատապարտեց յունական հրոսակախմբերի պարագլուխներից երկուսին։ («Հ. Գ.»)

—

Բէլգրադ, 22 ապրիլի

Գուշակից հաղորդում են, որ Գուշակից հաղորդում են, որ Գուշակում, կառավարական կուսակցութեան նախընտրական ժողովի ժամանակ, ապրիլի 20-ին, արիւնահեղ ընդհարում տեղի ունեցաւ սկուպշչինայի թեկնածու նշանակելու պատճառով։ 20 մարդ ծու նշանակելու պատճառով։ 20 մարդ վիրաւորված են։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 28 մարտի

Մարտի 23-ին Վանում մի հայ հրացան արձակեց մի տան վրա և վիրաւորեց տան բնակիչներից մէկին, մի հայի, որը մեղադրվում էր այն բանում, որ փետրվար ամսին ոստիկանութեան ձեռքն էր մատնել յեղափոխականների մի խմբի, իր ազգակիցներին, որոնք պատրաստում էին մի մահափորձ։

Բաշիբուզուկները կանչեցին ժանդարմերին, որոնք առիթից օգուտ քաղեցին հայերի վրա մի ընդհանուր յարձակում գործելու համար։ Հայերից սպանվեցին 31 և վիրաւորվեցին 8 մարդ։ Պակասում են մի քանի ուրիշ հայեր։

Կայսերական զօրքերը միջամտեցին և ձերբակալեցին մարդասպանների։

Հիւպատոսները գինուորներ տուին փախչողներին, որպէսզի նրանք կարողանան մտնել իրանց տները։ («Journal»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Երէկ, ապրիլի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին նշանակված էր Թիֆլիսի հայուհեաց բարեգ. ընկեր. տարեկան երկրորդ ընդհանուր ժողովը։

Անդամուհիների ուշ հաւաքվելու շնորհիւ, նիստը 39 հոգու ներկայութեամբ կայացաւ մօտաւորապէս ժամը 1-ին։

Ժողովը նախագահ ընտրելով տ. Շ. Լիսիցեանին և քարտուղար՝ տ. Ն. Տէր-Աւետիքեանին, անցաւ այնուհետև իր հերթական զբաղմունքներին։

Նախ կարդացվեց ու հաստատվեց 1907 թւի մարտի 25-ի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, և ապա՝ վարչութեան 1907 թւի գործունէութիւնը, ընկերութեան ելմտից հաշիւը։

Ներկայացված հաշիւից երևաց, որ հայուհեաց ընկերութիւնը ունի տարեկան մուտք՝ 7778 ր. 54 կ., իսկ ելք՝ 7388 ր. 88 կոպ.։ Այդպիսով՝ 1908 թւի առ 1-ն յունվարի ընկերութեան գանձարանում մնում է առձեռն դրամ 389 ր. 66 կոպէկ։

Դրանից յետոյ կարդացվեց զեկուցում կար ու ձևի արհեստանոցի 1906—1907 թ.թ. ուսումն. տարվայ մասին, որից երևաց, որ արհեստանոցը ունի I, II, III, IV և V բաժանմունքներ, ուր սովորելիս են եղել ընդամենը 127 աշակերտուհիներ։ Աշակերտուհիները գլխաւորապէս եղել են արհեստաւորների (59), մանրավաճառների (28), վաճառականների (16) և ապա գործակատարների զաւակներ (12)։ Տարվայ ընթացքում դրանցից հեռացել են 14 հոգի զանազան պատճառներով։

Արհեստանոցի օրերի թիւն է 7, իսկ կիսաօրերը՝ հօրից զրկվածներ՝ 32։

Աւարտել ու վարպետուհու վկայական են ստացել 14 հոգի, որոնցից մէկը միայն գնացել է գաւառ, իսկ միւսները աշխատում են քաղաքում։

Արհեստանոցը ունեցել է 8 վարժուհի և մի աւագ վարժուհի։ Պարապմունքները սկսվել են սեպտեմբերի 1-ին և վերջացել յունիսի 10-ին։

Արհեստանոցը պատուէրներից ու վաճառքներից ստացել է 1057 ր. 89 կոպէկ։

Այդ ընդհանուր տեղեկութիւններից յետոյ կարդացվեց ընկերութեան 1908 թւի նախահաշիւը, որի հիման վրա մուտք ըստ պասվում է 7731 ռուբլի (պարահանդէսներից՝ 3400 ռուբլի), և ելից ու զբօսանքներից՝ 3400 ռուբլի), և ելք նոյնքան։ Ներկայ տարվայ ծախքերի աւելանալը բացատրվում է նրանով, որ ընկերութեան արհեստանոցում աւանդվելու են նաև ռուսերէն ու հայերէն լեզուներ և թաւքանութիւն։ Ծախքերի խոշոր մասը կազմում է վարժուհիների ռոճիկը (4410 ռուբ.) և բնակարանի վարձ ու ջրի փողը (1400 ռուբ.)։

Վերջում ժողովը քննութեան ենթարկեց ընկերութեան կանոնադրութեան մի քանի էջերի, նոյնպէս և անունը փոխելու՝ այն է «կովկասեան» դարձնելու հարցը։

Ժողովը յանձնարարեց վարչութեան անդամուհիներին հոգ տանել այդ մասին և անել օրինական այն անհրաժեշտ փոփոխութիւնները, որոնք կը պահանջվեն կանոնադրութեան հաստատումը դիւրացնելու համար։

Երկար հակաճառութիւններից յետոյ ընտրվեց մի յատուկ մասնաժողով 5 հոգուց բաղկացած, որը վարչութեան անդամների հետ միասին պիտի աշխատէ արհեստանոցի համար սեփական շէնք ձեռք բերել։

Այդ նպատակով առաջարկվեց Բեհբուտովսկ. և Կոջորսկայա փողոցների անկիւնում գտնվող Իվանովայի տունը, սակայն ժողովը նպատակայարմար դատեց առ այժմ յետաձգել այդ հարցը և առաջարկեց նորընտիր մասնաժողովին մինչև մայիսի 14-ը վերջնական զեկուցում տալ այդ մասին։

Վերջում թերթիկներով կատարվեց վարչական անդամների ընտրութիւնը։

Վարչութեան անդամներ ընտրվեցին դարձեալ տ. տ. Մարտիրոսեան, Շ. Յովհաննիսեան և Ղարաչեան, իսկ փոխանդամներ՝ տ. տ. Ե. Վահրամեան, Մ. Յովհաննիսեան, Ս. Քալանթարեան և օր. Ռոտինեան։ Վերանոր ստուգիչ յանձնաժողովի անդամներ վերընտրվեցին հները։

Նիստը փակվեց ժամը 3-ին։

Լ. Դ.

ՄԱՏԱԿԱՐԱԿԱՆ ԱՏԵԱՆՈՒՄ

Թիֆլիսի մատակարարական ատեանի վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, ապրիլի 22-ին, պարզվեց, որ Ախալքալաքի գաւառի համար ալիւր արդէն ստացվել է Բօրժոմ կայարանում։ Ալիւրը ընդունում է ատեանի կողմից նշանակված յատուկ մի անձ՝ Աբուլով, որը և յանձնում է Ախալքալաքի գաւառական կոմիտեին։

Ն. Քրիգօնեանի նուիրած մի վագոն ալիւրը որոշված է բաժանել ութ մասի, իւրաքանչիւրը 75 պուդ, և տալ հայոց, վրաց, թուրքաց, ռուսաց բարեգործական ընկերութիւններին, ձրի ճաշարանին, աշխատանքի տան, մանուկների ապաստարանին, մանուկների հոգատար ընկերութեան։

Ախալցխայի ֆնասված գիւղերի համար նշանակվեց 6186 ր., որից 610-ը սերմացուի համար։

Ա. Քալանթար առաջարկեց նպատակ ունենալ օգնութեան ժամանակ և այն գիւղերը, որոնք գարնան շաբաթներում կը ֆնասվեն կարկտից և հեղեղներից, հնարաւորութիւն տալով գիւղացիներին նորից սերմանել արտերը նոր հացահատիկով, օրինակ կորեկով։

Ատեանը որոշեց գիւղացիներին բաժանվելիք հացի վրա աւելացնել պուդին 2 կոպէկ ապահովելու այն ծախքերը, որոնք կատարվում են ատեանի կողմից հացը ստանալու և ուղարկելու ժամանակ։

ՏՕԼՍՏՈՅԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մոսկվա գալուս առաջին տարիներից՝ ես շատ էի ցանկանում մօտիկից ճանաչել ռուս հսկայ ժառանգին, և մտորումներիս առարկան երկար սպասել չը տուեց ինձ։

Ուղղակի գալուս երկրորդ տարին,—չը նայելով որ մեծ գրողը բանադրված էր պրավոսլաւ եկեղեցու կողմից, և խօսքի ազատութիւնը դեռ չէր հնչվել ռուս երկնքի տակ,—1902 օգոստոսի 31-ին, նրա 50-ամեայ գրական գործունէութեան առիթով, մայրաքաղաքների թերթերը առաջին մի աղմուկ բարձրացրին նրա հանճարի շուրջը։

Ու, այն օրից, ես ինձ դատայ նրա երկրպագուների թուում։

Մեր կարդացողների միջակ շրջանն ու երիտասարդութիւնը, եթէ չեմ սխալվում,

պարզ գաղափար չունեն Տօլստոյի մասին։ Ո՞վ է Տօլստոյը, ինչպէս են անցել նրա մանկութիւնն ու պատանեութիւնը, երբ բացվել նրա հոգու միտքը, ինչ հանգամանքներում է յայտնվել աշխարհին նրա տաղանդը, ինչ՞ը ու ինչպէս է գրել, ինչպիսի կեանք անցկացրել, մի խօսքով՝ նրա կենսագրութիւնը պէտք է որ մեծ շահագրգռում առաջ բերի հայութեան բոլոր խաւերում։

Դեւլացնենք սրան, որ, վերջին շաբաթներս, Թիֆլիսում հաւաքված ժուրնալիստների առաջին ժողովն էլ ցանկութիւն է յայտնել հրատարակել մեծ գրողի կենսագրութիւնը, որ, ըստ ինքեան, շատ շահագրգիռ է։

Շատերն են գրել Տօլստոյի կենսագրութիւնը՝ թէ ռուսներից ու թէ տարերկրացիներից։ Խօսք չը կայ, որ ուշագրաւ են գլխաւորապէս ռուսների կազմածները, որոնցից այս կամ այն կողմով և այս կամ այն չափով՝ աչքի են ընկնում մի քանիսը։

Նկատի ունենալով թէ այդ կենսագրութիւնները ու թէ Տօլստոյի մասին խօսող լրագրական յօդուածները, ես այդ բոլորից հիւսել եմ առանձին մի կենսագրութիւն, որ բռնում է մօտ 100 երես։

Ունեմ և պրոֆ. Պ. Էյլցրախերի «Անվերջանութեան էութիւնը», որի մէջ, շատ շահագրգռօրէն, բացատրված է Տօլստոյի վարդապետութիւնը, որ բռնում է 35 երես և կարելի է թէ կցել նրա կենսագրութեանը և թէ հրատարակել առանձին։

Ժամանակի պահանջին համապատասխան համարելով այդ աշխատութեանս հրատարակումը, կը ցանկանայի, որ նա լոյս տեսնէր կամ ամենօրեայ թերթերից մէկում, որտեղից յետոյ արտատպվէր, կամ առանձին հրատարակիչ գտնվէր։

Ցանկացողները՝ պայմանների մասին կարող են դիմել ինձ Москва, священнику Э. Назарьянцъ *)։

Էմմ. ք. Նազարեան

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ

—

1898 թ. փետրվարին բազուբանակ ուներոր ազգայինները, ի յիշատակ Հայրիկի Բազու արած այցելութեան, հանգանակելով 30,000 ռուբլի, ցանկացել էին Էջմիածնում մի վայելուչ վեհարանի կառուցման հիմք դնելու, նախաձեռնութեամբ Մ. Աբամեանի և Հ. Մելիքեանի, որոնց գրաւոր զեկուցման հիման վրա հանգուցեալ հայրապետը 1901 թ. 16 սեպտ. № 1125 կոնդակով կարգեց Էջմիածնում մի յանձնաժողով, որը, հետզհետէ ստանալով յիշեալ պարոններից կարևոր գումարը, ձեռնարկելու էր վեհարանի կառուցմանը Տ. Գրիգորեանի կազմած յատակագծով։

Սակայն շատ կարճ տեւեց յանձնաժողովի գործունէութիւնը։ Բազուից ստացվեց երեք նուագում 4500 ր., % այդ գումարի 38 ր., ընդ. 4538 ր., որից ծախք է եղել քարերի և աւազի հայթայթման համար 2333 ր. 84 կ., մնար ծախք՝ 105 ր. 20 կ., իսկ մնացորդ 2098 ր. 95 կ. գումարը ընթացիկ արժէթղթերի կոտորով յետ ստացվեց պետական բանկից և վերադարձ 1905 թ. ապրիլի 25-ի № 331 կոնդակի հիման վրա յանձնվեց իրան Մայր Աթոռի կարիքների վրա գործադրելու։ Բայց յանձնաժողովը իր յայտարարութեան մէջ ընդգծեց, որ բարեւոք կը լինէր, եթէ այդ գումարը տրվէր իբրև յատուկ փոխառութիւն, որ ժամանակին, երբ նորից կը յայտարարվի շինութեան խնդիրը, յետ դարձնէր Մայր Աթոռը այդ գումարը ըստ պատկանելոյն։ Մինչ այս մինչ այն, յանձնաժողովի՝ պ. պ. Արամեանցին և Մելիքեանցին արած դիմումները մնացին անպատասխան, որով և բնականաբար լուծվեց յանձնաժողովը և մոռացութեան տրվեց այդ հարցը։ Իսկ թէ ինչ եղան յարգելի պարոնների մօտ ժողովված գումարները, այդ մասին կարող են բացատրել իրանք։

Ներկայումս, ճանապարհների դիւրութեան պատճառով, անպակաս են Էջմիածնից օտարազգի այցելուներ, որոնք սակայն սթափված են հեռանում այստեղից։ «Տեսանք հայոց Վատիկանը»,—ասաց անցեալներս Անգլիայից եկած եպիսկոպոսը։ «Այս է ուրեմն ձեր Վատիկանը»,—կրկնում են բոլորը։

Վերջապէս հայրապետի մահվան պատճառով ժողովված զանազան տեղերի պատգամաւորները անձամբ տեսան վեհարանը և նրա անձկութեան ու անյարմարութեան պատճառով ենթակայ եղան զանազան անախորժութիւնների։

Այժմ, երբ թափուր է գահը և թարմ Հայրիկի յիշատակը, ժամանակ է մտածելու ամենայն հայոց հայրապետին և Էջմիածնի անուան վայել կաթողիկոսարան կառուցանելու, որի յատակագիծը պատրաստ է և գտնվում է մեզ մօտ։

Թող այդ պատաւոր, վսեմ գործին մասնակից լինի իւրաքանչիւր ոք, որի համար նուիրական է Էջմիածնի պատիւը։

Լեոն Աղանեան

---

*) Խորհուրդ կը տայինք հեղինակին ուղարկել իր աշխատութիւնը Թիֆլիսում կազմված յանձնաժողովին։ Խմբ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Նոր-Բայազէտ, 18 ապրիլի

Մի քանի օր առաջ տեղիս ուսուցիչներից և ուսուցչուհիներից մի քանիսը սիրողների մասնակցութեամբ տուին մի ներկայացում՝ հայոց ուսումնարանի օգտին։ Խաղացին «Թուղթ խաղացողի կեանքը», որը մի երկու անգամ էլ է դրվել մեր բեմի վրա։ Այդ պիէսը շատ յարմար է գաւառական այնպիսի քաղաքների համար, որտեղ ժող. ստուար խաւերում տարածված է թղթախաղը, ինչպէս նաև մեր օրինակ «Քաւառում» (Նոր-Բայազէտի մականունը), մի լաւ դաս պիտի տայ մեր թղթամոլներին, որոնք թողած աւելի քաղաքավարի պարապմունքները, ինչպէս են ընթերցանութիւնը, գրագրան յաճախելը, հասարակական գործունէութեան մասնակցելը, ժողովրդական առօրեայ կեանքով ու կենցաղով զբաղվելը, խեղճերի և անճարների ցաւերի մասին հոգալը և այլն, տարվել են թղթախաղի անվայել սովորութիւններով, որտեղ ոչ միայն կօպէկներ կամ մանէթներ են տանում-տարվում, այլ և յաճախ այդ խաղը պատում է հարիւրների շուրջը և մեր պ. պ. թղթամոլների գրպանները բօպէպէս ուռչում կամ դատարկվում են... Բայց զարմանալին այն է, որ խաղացողներից ոմանք յաճախ մասնակցում են թղթախաղին՝ իբր ժամանակ անցկացնելու մի միջոց... Ասենք և այն, որ «Թուղթ խաղացողի կեանքը» իբրև մի դրամա, թէև ժամանակակից է, բայց մեր գաւառական ժողովրդի սրտին այնքան էլ դիւր չէ գալիս, ոչքան պատմական-ողբերգական ներկայացումները։ Եւ այդ է գուցէ պատճառը, որ տոմսակները մեզանում շատ անգամ զօռով, խաթրով են ծախվում։ Սակայն այս անգամ բոլոր տոմսակները վաճառվել էին, շնորհիւ պ. հարկային տեսչի և զօրքի գլխաւորի, որոնք հոգաբարձութեան անդամների հետ միասին յանձն էին առել ծախելու տոմսակները։

Մի բան միայն անախորժ էր, այն, որ հանդիսականներից շատերը իրանց իսկական տեղում չէին նստած, այլ 50 կօպէկանոցը ռուբլանոց նստարանում և ընդհակառակն, մի բան, որ անհաճելի հանգամանքների առիթ է տալիս երբեմն։ Հարկաւոր է հսկողութիւն պահպանել և ոչ թէ անփոյթ վերաբերվել այդ բանին, որը անշուշտ սառեցնում է շատերին թատրօն յաճախելուց...

Գալով խաղին, կասենք, որ Ժորժի դերում պ. պ. Զալդրանեանց լաւ էր, իսկ Ամալիայի դերը օր. Բութայիսեան, իր աննման խաղով, կատարեց հրաշալի կերպով։ Միւսները՝ պ. պ. Ռ. Ազարեանց, Հ. Տէր-Միքայէլեանց, Ն. Հայրապետեանց և այլն՝ համեմատաբար կարողացան պահպանել ընդհանուր անսամբլը։

Որսորդ

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք՝ Թէօֆիից (Անդրկասպեան երկիր), Աղա Համբարձումեանից՝ 24 ր. 28 կ. (նուիրել են Ն. Տէր-Օհանեան և ընկ. 5 ր., եղբ. Կոստանդեաններ՝ 5 ր., Զ. Ահարոնեան՝ 3 ր., Ա. Կարապետեան, Ա. Համբարձումեան, Ա. Օհանեան, Ի. Հախնազարեան, Ս. Հայրապետեան, Ս. Բարաթեան և Մ. Ասլանեան՝ 1-ական ր., Ա. Յարութիւնեան, Յ. Տէր-Գալստեան, Կ. Յակովբեանեան, Ա. Ավան-Քեօխվայեան, Բ. Բաբայեան, Ս. Բաբայեան, Ն. Սողոմոնեան, Ս. Ավանէսեան և Սերգէյ՝ 50-ական կօպէկ)։

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՏԱՌԱՊԵՏՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք՝ 1) Դերբենտից, Իսահակ Խաբազեանից՝ 3 ր., 2) Իւրիեվի գործարանից (Եկատերինօսլավ), Գրիգոր Դիմաթեանից՝ 10 ր., 3) Մոսկվայից, Լազարեան ճեմարանի IV դ. աշակերտներից՝ Մուշեղ Տէր-Միքայէլեանց, Սարգիս Ղազիեանց և Վահանակ Յակովբեանց՝ 30 ր. 30 կ. (յօգուտ հայ որբերի), 4) Խիվայից, Բ. Գ. Դանիէլեանից՝ 3 ր., նոյն տեղից, տիկին Մ. Դանիէլեանից՝ 2 ր., 6) Բերիից (Անդրկասպեան երկիր), Խաչատուր Գրիգորեան Յովհաննիսեանից՝ գիւղական շտեմարանի համար Ղափանում 200 ր.։

—

Ստացել ենք զատական տօների առիթով չքաւորների համար՝ 1) Ղզլ-Արվադից, Խաչատուր Բաղդասարեանից՝ 5 ր., 2) մի տիկնոջից՝ 20 ր.։

ԱՐՓԻԱՐԻ ՄԱՀԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

—

Ստացանք Մերվից, Ղազարոս քահ. Յովսէփեանի ձեռքով տնօրհնէքի ժամանակ հանգանակած 11 ր., որով մինչև այժմ ստացվածների հետ («Մշակ» № 81) ունենք 356 ռուբլի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մասատրա գ. (Էջմ. գաւ.), 5 ապ.

Չը նայած մի քանի անգամ առիթ ենք ունեցել լրագրութեան միջոցով Մասատրայի և նրան շրջապատող մի քանի հայ գիւղերի աննախանձելի դրութիւնը նկարագրել, և դպրոցների բացակայութիւնը այդ գիւղերից, ապա խնդրել ենք բարեգործական և նման ընկերութիւնների աշակցութիւնը՝ այդ գիւղերից գոնէ մէկում դպրոց բաց անելու համար, բայց, ինչպէս երևում է, մեր խնդիրը լոկ խնդիր է մնացել։

Բացի այն, որ այդ գիւղերում գոյութիւն չունի դպրոց, պէտք է ասել, որ չը կայ նոյնպէս և հրատարակութիւն, որ կարողանար իր յորդորներով ու խրատներով դպրոց բանալու գաղափարը տարածել ժողովրդի մէջ։

Այդ գիւղերում թագաւորում են տգիտութիւնն ու խումարը, այնպէս որ 8—10 տարեկան երեխաներն անգիր գիտեն խումար խաղալու գաղտնիքները։ այդ ախտը սարսափելի լայն ծաւալ է ստացել Մասատրա գիւղում, ուր կան նաև մի քանի գինետներ։ Դիւղացիքս խումար խաղացողները մեծ մասամբ պատկանում են աղքատ դասակարգին, որը մշակութեամբ է պահում իր ընտանիքը։

Պէտք է նկատել, որ Մասատրան ունի ընդարձակ և պտղատու վարելահողեր, սակայն տեղական ժողովուրդը իր անընդունակութեան շնորհիւ չէ կարողանում օգտվել այդ հողերից։

Մեր նահապետական ժողովուրդը կամաց-կամաց անբարոյականանում է բարեխղճութեամբ և կանգնած է անդունդի եզերքին։ Նրան հարկաւոր է օգնութեան հասնել, քանի ուշ չէ։ Մեր կարծիքով, այս ախտի դէմ միակ կուռելու միջոցը դպրոցն է, որ ժամանակի ընթացքում կազնուացնի ժողովրդին։

Կրկին անգամ հայ ընկերութիւնների ուշադրութիւնն ենք հրաւիրում Մասատրայի շրջանի վրա, որը խարխափում է խաւարի մթնոլորտում։

Մ. Գ.-եանց

—

Դիլիջան, 14 ապրիլի

Այս տարի ձմեռը սաստիկ էր Դիլիջանում, և գարունն էլ խիստ ուշացաւ։ Անասունները մինչև տարի վերջերը մնացել էին գոմերում կապված։

Անցեալ աշնանը Ղազախի գաւառի հացավաճառ «փօղրաթչիները», սուր հոտառութեամբ զգալով հացի թանգանալու հեռապատկերը, սկսեցին «մաղանդան» բարձրացնել և ցորեն ամբարել, իսկ ամբարներին դիմող գիւղացիներին էլ ժողովեցնելով, որ ամբարներում ցորեն չունեն, հացի գինը զգալի չափով բարձրացրին։ Հացի արհեստական թանգացումը սոսկալի ատելանի պիտի հասնէր, եթէ միայն արագութեամբ հարստանալու տենդով բռնված փօղրաթչիների միմեանց դէմ մղած մրցութիւնը չը լինէր։ Նրանք այնպիսի մեծ քանակութեամբ ցորեն ներմուծեցին Ռուսաստանից մեր գաւառը և ամբարեցին գաւառիս կենտրոնական վայրերում, որ հացի գինը աշնանից մինչև այսօր մնաց միևնոյնը և այժմ Ղազախից, ուր մեծագոյն ամբարներն են գտնվում, ուրախ լուրեր են գալիս, որ հացը էժանանում է և իջել է մինչև 1 ր. 45 կ. պուդը։ Դրան նպաստել է և այն հանգամանքը, որ, ինչպէս մեզ տեղեկացնում են, Ղազախի դաշտային մասի արտերը «բօյ» են քշել և առատ հունձ են խոստանում։

Բայց այդ էլ քիչ մխիթարական է, որովհետև մեր գիւղացի ստուար բազմութիւնը հաց գնելու բոլոր միջոցները սպառել է և այժմ միջոց չունի իր սովալլուկ երեխաներին կերակրելու։ Այս տեսակէտից խիստ անմխիթարական է Դիլիջանեան գիւղախմբին (Դիլիջան, Պողոս-Բիլիսա, Զարխիջ և Թօշ) զրկելը մաս ստանալուց Պետական Դումայի որոշած պետական նպաստից։ Ասում են, որ գաւառական խորհրդում ադմինիստրացիայի ներկայացուցիչներն չեն կարողացել հաւատացնել, որ Դիլիջանում էլ կան քաղցած ընտանիքներ. «Դու խիղճ չունի՞ս, պ. ժողովրդական ներկայացուցիչ,—ասել է նա,—այն քաղաքի նման Դիլիջանում կարող է քաղցած մարդ լինել...»։ «Այն քաղաքանման տներից չնչին մաս ունեն դիլիջանցիք, նրանց մեծագոյն մասը պատկանում է դրսից եկածներին և վերաբնակիչներին, իսկ բուն դիլիջանցիք աղքատ, մշակ գիւղացիներ են, նման ուրիշ գիւղացիների»,—պատասխանել է ժողովրդական նշանակովի ներկայացուցիչը։ Բայց և այնպէս, ինչպէս լսում ենք, Դիլիջանի գիւղախումբը նպաստ ստացող գիւղերի շրջանից արդէն դուրս է մնացել...

Վերջերս մի զինուորական ինժեներ գալով՝ Դիլիջանում տնոր էր վարձում մի բատարէա արտիլերիական զինուորների և նրանց ձիաների համար։ Նրանք 200 հոգի են 6 օֆիցէրներով։ Ասում են, որ նրանք եկող ամառ այստեղ են մնալու։ Այս հանգամանքը մի փոքր կենդանութիւն կը տայ Դիլիջանի թմրած առևտրին։ Ինչպէս յայտնի է, բացի սրանցից աշխատական բնակութիւն ունի այստեղ կովկասեան վեցերորդ հրացանաձիգ գունդը, որի մի մասը այժմ գտնվում է հին-Նախիջևանում։

Այժմ դիլիջանցիներին զբաղեցնող ամենաէական և լուրջ հարցն է նոր հողաբաժանութիւնը։

Անցեալ ամսին կայացաւ ոչ պաշտօնական գիւղական խորհրդակցական ժողով, ուր 15 հոգուց բաղկացած մի յանձնաժողով ընտրվեց, որին յանձնարարվեց նոր հողաբաժանութեան համար մի ծրագիր մշակել և ներկայացնել ընդհանուր ժողովի հայեցողութեան։ Յանձնաժողովը մարտի 12-ին, երեկոյեան, տեղիս դպրոցում առաջին անգամ զբաղվեց այդ հարցով, ուր ընկերունքով ընդունվեց նոր հողաբաժանութեան հարցը, ունենալով դրա համար հատատ հիմունքներ։ Նաև ընդունվեց վերաչափել բոլոր հողերը մասնագէտի հսկողութեամբ և ցուցմունքներով։ Ցանկութիւն յայտնվեց ուսումնասիրել մոլոկանների և գերմանական կոլօնիաների հողաբաժանութիւնը, և լրագրական քննադատութեան ենթարկել այն հարցը, թէ որն է ամենացանկալի, արդար և կատարելագործված հողաբաժանութեան ձևը։ Մեծ և անփոխարինելի ծառայութիւն մատուցած կը լինեն մեր մասնագէտ գիւղատնտեսները և երկրաչափները մեր գիւղացիական ազգաբնակութեանը, եթէ հէնց իսկ այս թղթակցութեան լոյս տեսնելու օրից՝ մեր օրաթերթերում զբաղվեն այս հարցով։ Նրանց մասնագիտական քննադատութիւնները և ցուցմունքները մեզ շատ բան կը սովորեցնեն և բարոյական օգուտի հետ միասին առիթ կը տան նիւթական ծախսերի կրճատման այդ առիթով։ Հողաբաժանութիւն՝ սա ամենաբարդ, ամենաբարդ և ամենադժուար լուծելու հարցն է գիւղական շրջաններում։

Այդ ժողովում որոշվեց գիւղի շրջակայքի նադելից հողեր յատկացնել գիւղը ընդարձակելու, կալ ու մարագ շինելու և խնձորի այգիներ անելու, ինչպէս և նոր դաշտեր շինելու համար։

Արհուս

—

Կրասնօվոդսկ, 8 ապրիլի

Ապրիլի 6-ին Բաքուից տեղս եկող «Սկոբելէվ» պօստատար շոգենաւից, առաւօտեան ժամը 8-ին, ծովն է ընկել մօտ 60 տարեկան կարմրեցի մի հայ կին, որի ով լինելը առայժմ յայտնի չէ։ Դիակը չէ գտնված։ Նրա իրեղէնները պահվում են Կրասնօվոդսկի ոստիկանատանը։ Մի քանի ճանապարհորդների ասելով, դժբաղդ կինը գնում է եղել իր որդու մօտ՝ Տաշքենդ։

Աբէլեանի զեկավարութեամբ յօբելեանական ճանապարհորդութիւն կատարող դերասանական խումբը վերադարձին մեզ ևս այցելեց. տուին երկու ներկայացում՝ «Իօկաոր Շաօկման» և «Երեկոյեան Շեփոր»։ Առանց այն էլ դանդիճը փոքր էր և չը նայելով դրան՝ աթոռների մի երրորդ մասը դատարկ էր. իսկ գալիօրկայի տոմսակ ունեցողները պատի էին արել բազմել, համարեա, առաջին կարգերի աթոռների վրա։

Վերջին ժամանակներս տեղիս ազգաբնակութիւնը թողնված է մասավաճառների կամայականութեան. ոչխարի մսի սակագինը 15 կ. է ֆունտը, մինչդեռ նրանք ծախում են 20 կ.։ Խանութում միս չէ երևում. «չը կայ» ասում են, բայց հէնց որ համաձայնվում ես վճարել 20 կ., իսկոյն «գըտնում» տալիս են... Շատ անգամ ոչխարի մսի փոխարէն այծի միս են պահում խանութում։ Եւ դրա դէմ ոչ բողոքող կայ, ոչ էլ հսկող։

Ճղբ. Նօբէլի մի քանի տարի շարունակ գործ դրած ջանքերը Զելէքէն կղզու վրա՝ անօգուտ չանցան։ Անցեալ տարի դեկտեմբերի 7-ին նաւթահորերից մէկն սկսեց ֆոնտան խփել, տալով օրական մօտ 24—25 հազար պուդ նաւթ, որը մի ինչ-որ անզգուշութեան շնորհիւ բռնկվեց և մի ամբողջ շաբաթ չաշխարվելուց յետոյ հազիւ կարելի եղաւ կրակը հանգցնել։ Այժմ թէև ֆոնտաններ չը կան, բայց կանոնաւոր կերպով քաշում են մեքենայով, և բաւականին առատ նաւթ է տալիս։

Այդ հանգամանքից խրախուսված, ներկայումս ուրիշ փիրմաներ ևս սկսել են նաւթահորեր փորել։

Ապրիլի 16-ին Ղազանչիկում սպանված է դեպօյի մօնտեօրը։ Սպանողը անյայտացել է։

Փոս

—

Հին-Նախիջևան, 21 ապրիլի

Ամսիս 16-ին, Նախիջևանցի մաշադի Կադիմ Կադիմօվը (Նախիջևանի շրջանի նախկին ջրպետը) Բութայիսի գեներալ-նահանգապետ Սալալէինսկու կողմից ուղարկված (գոնէ այդ անունով է ուղարկվել Թիֆլիսից) մի ծանրոց է ստանում։ Որպէս թէ Կադիմօվը կանչածելով այդ հայցէով ուղարկված ծանրոցի վրա, բաց է անում պօստատանը և յանկարծ դուրս է գալիս, որ ծանրոցը դժոխային մեքենայ է։ Իսկոյն ոստիկանութեան իմաց է տրվում. կազմվում է արձանագրութիւն և գրաւվում ծանրոցը։ Ամսիս 18-ին քաղաքից դուրս պայթեցրին դժոխային մեքենան. սկզբում 150 քայլ տարածութեան վրա քանիցս զնդակահարեցին մեքենայի արկղիկը, բայց չը պայթեց, վերջը ատրված եղան ֆիտիլների միջոցով պայթեցնել տալ։

Դժոխային մեքենայի հանելուկը չը լուծվեց, թէև բերնէ-բերան զանազան կարծիքներ են յայտնվում։

—

Ամսիս 18-ին, 1905 թ. Թուրքացած Նօրս գիւղացի Յարութիւնի և իր թուրքացած ընտանիքի հարցաքննութիւն էր։ Երևանի նահանգապետից հրամայված էր թուրքացած ընտանիքին բերել ոստիկանատուն և հարցաքննութեան ենթարկել։ Ի միջի այլոց նրանց հաւատոլեու և խոստովանեցնելու համար յայտնված էր և տեղիս յայտնի։ Թուրքացած ամուսինները կարուկ կերպով յայտնում են, որ իրանք իրանց յօժար կամքով են թուրքացել, որ ի զուր են իրանց հարց ու փորձ ենթարկում, որովհետև ամեն ինչ վերջացած պրծած է։ Եւ յիրաւի թուրքացած Յարութիւնը (այժմս Իսմայիլ) իր աղջիկը թուրքի է տուել, ինքը իր անչափահաս երեխաներովը ենթարկված է ժահմեդական բոլոր ծիսակատարութիւններին՝ թլփատութեանը և մինչև անգամ անցեալ տարի գնացել է Քեալբալայի։ Մենք ականատես եղանք թէ ինչպէս թուրքացած Յարութիւնը շրջապատված մի խումբ ուղղափառ մուսուլմաններով՝ ուրախ-զուարթ ոստիկանատնից Նախիջևանի յայտնի Զաֆար-Կուլի-խանի ընակարանն էր վերադառնում։ Ասում են, որ Յարութիւնի թուրքանալու գլխաւոր շարժառիթներից մէկն էլ նիւթական անապահովութեան պէտք է վերագրել։ Մինչև անգամ նա յաջողին յայտնել է, որ «հայանալով չեմ կարող ապրուստ ունենալ, մինչդեռ թուրքերն առատ կերպով օգնում են ուղղափառ կրօնի գերկն ընկած նախկին հային»։

—

Քարվանսարա, 20 ապրիլի

Այսօր բացվեց Կովկ. հայոց բարեգործ. ընկ. տեղական ճիւղ։ Ժողովի նախագահ ընտրվեց Մեսրոպ քահ. Էդիլեանը, որը ելոյթ ունեցաւ ընկ. կանոնադրութեան յօդուածներից կարևորները և բացատրեց ընկերութեան նպատակը, յորդոր կարդալով բարեփաց մարդիկ ընտրել ընկերութեան գործերը վարելու համար։ Միաձայն ընտրվեցին՝ նախագահ՝ Մեսրոպ քահ. Էդիլեան, քարտուղար և գանձապահ՝ Վ. Յարութիւնեան, անդամներ՝ Ռուստամ-բէգ Զաքարեան, Վաղինակ Սիմէօնեան, Գրիգոր Յովակիմեան, փոխ-անդամներ՝ Մելիք Տէր-Մելիքսեդեան, Դարեգին Թումանեան, վերատուգող յանձնաժողովի անդամներ՝ Արտեմ Իսխանեան, Մարկոս Խաչուժեան և Անդրէաս Գապեան։

Գիւղացի

—

Նուխի, 7 ապրիլի

Եթէ ամենուրեք կարիք է զգացվում բարեգործական ընկերութեան ճիւղեր բանալու, պէտք է կոյր չը ձևանանք տեսնելու, որ մեր Նուխին առաւել քան կարիք ունի այդ հիմնարկութեան։ Լրագրութեան էջերում դժբաղդութիւն ունենալով մեր բիւր ցաւերի և ծովացած կարիքների արտայայտիչ հանդիսացող ոյժի բացակայութեան, այլ վայրերում գուցէ մեզ բաղդաւոր ատաղի տակ են երևակայում, բայց մենք տեղացիներս երկու աչքով կոյր պիտի լինենք, որ չը տեսնենք՝ թէ ինչպիսի աննախանձելի տգտկութեան, անփութութեան և անգործունէութեան ենք մատնված։ Մի կողմ թողնելով անտէրութեան մատնված գաւառական «մի քանի հատ» դպրոցները, նոյն իսկ մեր քաղաքի դպրոցը ըստ տնտեսական յուսահատական վիճակի է ենթարկված։ Մեզ ամենքս յայտնի է, որ մեր գաւառը, շնորհիւ իրար յաջորդող անլսդդաթեր տարիների, զրեթէ ամայացած է. գիւղացիք պարտքի տակ ընկած, հողն ու տունը գրաւ դրած, եզն ու գութանը ծախած, մի քանի լաթեր շալակելով, լցվել են մեր քաղաքի խնամի-նկուղները և անդուռ, անպատուհան թոնրատները։ Քանի քանի ընդունակ աշակերտներ թոշակի պատճառով դուրս են եկել դպրոցից և դեռ քանիսը տեսնելով իրանց օրվայ պարէնը հայթայթելու դժուարութիւնները՝ չեն համարձակվում ուսման մասին մտածելու։ Մեռաքսով յայտնի, բայց աղքատներով հարուստ մեր քաղաքի փողոցներում վխտացող և եկեղեցու դուռը շարան բռնած աղքատներին տեսնելիս, մեզանից որի՞ հոգու մէջ տանջալի բօպէներ տեղի չեն ունեցել։

Բարեգործական ընկերութեան ճիւղ մեր Նուխին էլ ունեցել է, սկսած 1889 թուից մինչև փակման օրերը. ամբողջ տասն տարի նա գործել է մեր Նուխում և բարի սերմեր է տուել. այդ օրերի քաղցը մտապատկերները դեռ չեն նսեմացել մեր յիշողութեան մէջ։ Ի՞նչ համեմատութիւն կարող է տեղի ունենալ այսօրվայ և այնօրվայ մէջ.—այն ժամանակ մեր Նուխում եռում էր կեանքը իր ժողովներով, մտքերի փոխանակութեամբ, ներկայացումներով, առաջադիմութեամբ, գրաքարանով. իսկ այսօր...

Յարգելի հայրենակիցներ. օգտվենք մեր առաջ դրված նպաստաւոր պայմաններից. ամեն վայրերից դիմումներ են լինում ճիւղեր բանալու։ Թողնելով մի կողմ Բաթումը, Երևանը, Էջմիածինը, Ալէքսանդրոպօլը, Ախալցխան և այլ մեզանում յայտնի քաղաքները՝ գոնէ յետ չը մնանք Ղազախից, որ մի շատ փոքրիկ գաւառական քաղաք է։ Միանանք և սենք՝ դիմելու Նուխու ճիւղի բացման առիթով. մեր ճիւղի նախկին գրաքարանը յետ պահանջենք քաղաքային վարչութիւնից, որը գովանի հեռատեսութեամբ յանձնված է յետ առնելու պայմանով. փակման օրերից մնացած հաշիւները պահանջենք դէպքից օգտված պարոններից. այսօրվայ մասնաւոր նուիրատուութիւնները ձեռակերպենք պարտադիր վճարների, և որքան շուտ, այնքան լաւ, այնքան արդիւնաբեր։

Մեծ և քաղաքացիական պարտականութիւն կայ թիֆլիսաբնակ նուխեցիների վրա, որոնք ձեռնհաս են զարկ տալու յիշեալ նպատակի իրագործման. մանաւանդ տեղիս փոխանորդ հ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանի վրա, որն անցեալում բուռն մասնակցութիւն է ունեցել բարեգործական

ճիւղի գործունէութեան ընթացքում թէ իբրև անդամ և թէ իբրև նախագահ։

Սահակ Ք. Տէր-Պողոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Երէկ, ապրիլի 23-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորօվնայի անուանակոչութեան օրը, Ալէքսանդրօ-Նէվսկի զինուորական տաճարում, պատարագից յետոյ, կատարվեց մաղթանք, որին ներկայ էին Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկով կոմսուհու հետ միասին, գեներալիտէտը, հասարակական և զինուորական հաստատութիւնների ներկայացուցիչները և շատ աղօթողներ։ Մաղթանքներ կատարվեցին նաև օտարազգեան եկեղեցիներում, հրէական սինագոգում և այլն։ Քաղաքը առաւօտեանից զարդարված էր դրօշակներով։ Արսէնալի սաղից մաղթանքի ժամանակ արձակվեց 21 թնդանօթ։ Այդ օրը բոլոր հասատատութիւնները փակ էին. պարապմունքներ չը կային նաև բոլոր դպրոցներում։

◆ Այսօր տեղի է ունենալու կովկասեան կայսերական բժշկական ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ժողովից յետոյ կայանալու են պաշտօնական անձերի ընտրութիւններ։

◆ Ապրիլի 22-ին կովկասեան զինուորական-նահանգական դատարանում քննվեց Քութայիսի նահանգի բնակիչ Իվան Զէլիձէի գործը, որ մեղադրվում էր քրէական պատժագրքի 1454-րդ յօդուածով։ Դատարանը մեղադրելին մեղաւոր ճանաչեց և դատապարտեց ժահվան պատժի կախաղանի միջոցով։

◆ Գանձակեցի Ի. Մայիլովը միջնորդութիւն է յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ, որ Թոյլատրվի աւտօմօբիլների հաղորդակցութիւն հաստատել «Գանձակ» կայարանից, Գանձակ քաղաքի միջով, մինչև Ելիսաւետպոլի գիւղը, իսկ ապա ժամանակ՝ մինչև Հաջիքենդ։

◆ Քութայիսում բնակվող ազնական Վ. Գօցիրիձէն Կովկասի Փոխարքայի առաջ միջնորդութիւն է յարուցել, որ Թոյլատրվի աւտօմօբիլների հաղորդակցութիւն հաստատել Քութայիսի, Խօնու և Սամտրէդու միջև, և Քութայիսի ու նոյն նահանգի Բաղդադի գիւղի միջև։

◆ Ապրիլի 22-ին, Դեսիմինօվսկի հրապարակում, երեկ. ժամը 4-ին, Տիմօֆէյ Մարկինի խանութն են մտնում Դիմիտրի Պապով, Սեմեոն Բիրիւկով, Ալէքսէյ Սմիրնով, որոնք ժահվան սպառնալիքի տակ Մարկինից փող են պահանջում, որի ժամանակ Պապովը դանակով վիրաւորում է Մարկինին պաշտպանելու համար հանդէս եկած Ալէքսէյ Ակիմովին (Կօրօլով), որից յետոյ բոլորն էլ անյայտանում են։ Աստիկանութեան ձեռք առած միջոցների շնորհիւ Սմիրնովը, Բիրիւկովը և Պապովը ձերբակալված են. վիրաւորված Կօրօլովին տարել են Միքայէլեան հիւանդանոցը, ուր, բժիշկների վկայութեամբ, նրա կեանքը վտանգի մէջ է։

◆ Թիֆլիսի կայարանի նոր կառավարիչ Մաժարովը, ստանձնելով իր պաշտօնը, կարգադրեց փակել բոլոր այն մուտքերը, որ տանում են դէպի կայարանի շինութիւնը, և բանալ միայն գնացքների գալուց մի ժամ առաջ։ «Իրերի այս կարգը, ասում է «Т. Л.»-ը, բազմաթիւ անյարմարութիւններ է ստեղծում ճանապարհորդների համար, որոնք կայարան են գալիս ոչ հատ-հատ, այլ խմբով, միանգամից։ Առանձնապէս դա ծանր է 3-րդ կարգի վագոնների երթևեկող ճանապարհորդների համար, որոնք կայարան են գալիս գնացքները մեկնելուց մի քանի ժամով առաջ. իսկ այժմ նրանք պէտք է կանգնած ման արնի կամ անձրևի տակ և սպասեն գոնների բացման։ Այնուհետև, կարող են ահագին նեղութիւններ կրել և եկող ճանապարհորդները։ Պղտոր ջրում ձուկ կորսան միայն գրպանահատները, որոնք ամբոխի հետ դէպի դուռն են յարձակվում»։

◆ Ապրիլի 22-ին Բօրչալուի գաւ. ընակիչներ Երզգոր Ներսիսեան, Սման Սերսիսեան և Յովհաննէս Զանիսեան յայտնել են ոստիկանութեան, որ ապրիլի լոյս 22-ի գիշերը, ժամը 1-ին, չորս անյայտ չարագործներ Վաղէ կոչված տեղում յարձակվել են իրանց հանգիստի հովուանոցի պատրոս Ներսիսեանի, Խոսրով Մաղասեանի և Պողոս Զանիսեանի վրա և քշել են 30 հատ ոչխար, 180 ռուբլի արժողութեամբ, և տարձանակով վիրաւորել են Պետրոս Ներսիսեանին։ Բնութիւնից պարզվել է, որ կողոպտիչները եղել են պարսկահպատակներ՝ Ռեսուլլա Աբդուլա-օղլի, Մուխտար Հուսէյն-օղլի և Կուլի Ռամա-Կուլի-օղլի, որոնք ձերբակալված են։ Վիրաւորվածը տարված է Միքայէլեան հիւանդանոցը, իսկ սեղադրվողները յանձնված են դատարանին։

◆ Ապրիլի 22-ին, երեկ. ժամը 11-ին, Մ.-Կարապետ ձորում, Սիօ Սմալ-ղըզու, Կալօ Նաքլ-օղլու, Անդէ-ղըզու և Ասօ Մուսատաֆա-օղլու, որոնք արհեստով մուրացկաններ են, բնակարան են մտնում մի քանի անյայտ չարագործներ և վիրաւորում են առաջին երկուսին ծանր, իսկ մեռ սրինգ թեթև կերպով։ Զորոն էլ տարված են հիւանդանոց։

◆ Պաշտօնական տեղեկութիւնները վկայում են, որ այս տարի Անդրկովկասում բամբակի ցաքսերը անաջող են։ Պատճառը յորդ անձրևներն են։ Մի կողմից էլ բանւոր ձեռքի թանգանալը ստիպում է աւելի քիչ տարածութիւն ցանել։

◆ Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը կարգադրել է՝ ձրիաբար պետական անտառներից անհրաժեշտ քանակութեամբ դանդան փայտեղէն բաց թողնել Կովկասի սահմաններում մորեխը ոչնչացնելու համար, պէս-պէս յարմարութիւնների վրա գործադրելու նպատակով։

◆ Թիֆլիսում մօտիկ ապագայում իրանց բաժանմունքներն են բանալու Պետերբուրգի առևտրա - արդիւնաբերական, ուսաց արտաքին-առևտրական Վոլժսկի-Կամսկի բանկերը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ապրիլի 22-ին դիմել է դումայական տնտեսական ժանաժողովի նախագահին և խնդրել՝ հարց յարուցել մի նոր սակագին հաստատելու և հացի սակագինը փոփոխելու մասին։

◆ Տաշկենտում մայիսի սկիզբներում Ախմէչան Էֆէնդի Բէկդամիրովի խմբագրութեամբ լոյս է տեսնելու թուրքական մի նոր լրագիր «Ասխա» անունով։

◆ Թիֆլիսում մտադրութիւն կայ բանալ կանանց պրոֆեսիոնալ դպրոց ուղղափառ հոգևոր վարչութեան միջոցներով։ Նաև խօսում են ուսուցչանոց հիմնելու մասին, ուր յատկապէս պատրաստելու են ուսուցիչներ և վարժուհիներ վրաց թեմի եկեղեցական ուսումնարանների համար։

◆ Բաթումում և Սուխումում, տեղական վրացի կանանց մէջ միտք է յղացել հանգանակութիւն բանալ յօգուտ իշխ. Ի. Ճավվաձէի փօնդի։

◆ Հանգուցեալ Կառարինէ Նադիրեանի ժառանգութեան կտակատարներն են Ա. Նադիրեան, Զ. Գրիգորեան և Սահակեան։

◆ Նախալովկայի բնակիչները երեք օր առաջ թոյլատրութիւն են խնդրել գեն.-նահանգապետից մի յատուկ ժողով գումարելու և միջոցներ մշակելու շանտաժիստների դէմ կռուելու համար։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Ապրիլի 22 ին, առաւօտ. ժամը 11-ին, Լեվոն Փալալանդօվը յայտնել է ոստիկանութեան, որ նախորդ օրը, երեկոյեան մօտ ժամը 10-ին, նրա ծառայ Ալէք. Ալաբագիանին, նման բանալիով բանալով կամօղը, գողացել է 125 ռուբլի և իր անցագիրը և անյայտացել է։

◆ Ապրիլի 22-ին, Լօտկինսկի փողոցում բնակվող Դր. Սալիվանովը ոստիկանատուն է տարել պայթուցիկ նիւթ ֆիտիլով ժեստի արկղով և յայտնել է, որ մի ինչորը չարագործ գցել է մանրածախի խանութը և անյայտացել է։ Պայթուցիկ նիւթը չէ պայթել։

◆ Ապրիլի լոյս 22-ի գիշերը Միքայէլեան փողոցում Կատ. Ռօթարեանի բնակարանում հրդեհ առաջացաւ, որը հանգցրել են հրդեհաշէջները։ Վնասը հասնում է 2000 ռուբլու։

◆ Ապրիլի 22-ին, երեկոյեան ժամը 9-ին, Անդրէեվսկի փողոցում Մելիքսեդ Յովհաննիսեանի բնակարանն են մտել 4 զինված չարագործներ և ժահվան սպառնալիքով խլելով 261 ռուբլի 3 կօպ. և կարի մեքենան՝ անյայտացել են։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Ցայտնի ռուս գրող Ա. Ի. Կուպրինը պատասխանատուութեան է ենթարկվում քրէական օրէնդրութեան 129-րդ յօդուածի հիման վրա՝ «Հարսանիք» (Свадьба) վերնագրով իր պատմուածքի համար, որը տպագրված է եղել ոստիկանութեան կողմից գրաւված «Зарница» ալմանախում։

◆ Մօտ ժամանակներս վախճանված գեն.-ադիւտանտ Ն. Պ. Լինեվիչը թողել է մի կտակ, որի համաձայն նա դրամական գումարներ է նուիրում՝ 1) Զերնիգովի կլասիքական գիմնազիային, ուր նա ստացել է իր նախնական կրթութիւնը, իր անունով այնտեղ թոշակաւոր պահելու համար։ 2) 84-րդ շիրվանեան հետեակ գնդին, որի հրամանատարն է եղել նա Կովկասում։ Վերջինիս դրամագլուխը պէտք է պահվի Թիֆլիսի կազմակերպների կօրպուսում ստիպենդիա կազմելու պատակով, որից կարող են օգտվել գնդի օֆիցէրների զաւակները։ 3) Կովկասեան 2-րդ հրացանաձիգ բատալիօնին, որի հրամանատարն է եղել Լինեվիչը։ 4) մի դրամագլուխ էլ թողել է իր անունով կոչվող Լինեվիչ գիւղին, որի տակ ունենալով պէտք է բացվի նոյն գիւղում դպրոց։ Իր բազմաթիւ յիշատակարանները հանգուցեալը թողել է որդուն, որը ներկայումս կարգի է բերում նրանց։ («Բ.»)

◆ Ապրիլի 16-ին Պետերբուրգից աքսոր են ուղարկվել 150 հոգուց աւելի քաղաքական մեղադրեալներ, որոնց մի մասը գնալու է Սիբիր։ («Հов. Сл.»)

◆ Հաղորդում են, որ, գեներալներ Ֆօկի և Սմիրնովի միջև տեղի ունեցած մենամարտից յետոյ, գեն. Կիրէեվը մի գրաւոր զեկուցում է արել ուր հարկն է՝ հարց զարթեցնելով մենամարտի համար կանոնները մշակելու անհրաժեշտութեան մասին։ Խօսում են, որ զինուորական մինիստրութեան մէջ ներկայումս զրաղմունքի նիւթ են դարձրել այդ հարցը։ («Հ. Сл.»)

◆ Բանտային գլխաւոր իշխանութիւնը, ի նպատակ առնելով բանտերի լցվելը, մտադիր է 1908 թւականի ընթացքում՝ 25,000-ից մինչև 30,000 ժենակեաց բանտարկեալների համար՝ կայարաններ պատրաստել։ («Հ.»)

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը տեղեկացրել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին, որ իր կողմից ոչ մի արգելք չը կայ, որպէսզի ըէալական դպրոցների բարձր դասարանների աշակերտներին՝ իրանց դպրոցների աւարտման քննութեան հետ միաժամանակ թոյլատրվի նաև լրացուցիչ քննութիւն բռնելու գիմնազիաներում լատիներէն լեզուից։ Միայն թէ լատիներէնի քննութիւնը բռնելու մասին վկայական պէտք է տրվի ըէալական դպրոցի աւարտման վկայականը ներկայացնելուց յետոյ։ («Հ.»)

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կահիրէ, 20 ապրիլի (Ն. տ.)

Թոյլ տուէք ինձ, որպէս Արփիարի մի խոնարհ աշխատակցի և իր անման հանճարին հիացողներից մէկի, իմ անհուն վշտի և բողոքի ձայնը ևս միացնել հայ մարդու, խղճի և գրչին դէմ մերաղնէից ոմանց ուղած անտնիս, արիւնոտ և բռնապետական վերաբերմունքն դէմ, Արփիարին անմոռաց կրուստին առթիւ ձայն բարձրացնող մտաւորականներուն պատուաբեր և գիտակից ճիգերուն և խնդրել ձեզնէ հաճիլ մեր կողմէն ևս ստորագրել այդ որոշմագրին ներքև։

Մ[illegible]. Նաթանեան

—

Կօպանդ, 21 մարտի *)

«Մշակի» № 60-ում ոմն X Մերվից գրած թղթակցութեան մէջ բարեհաճել է գրել որ՝ ես մարտի 9-ին Մերվի հայոց եկեղեցում խօսած քարոզիս մէջ այնքան եմ յափշտակվել, որ «թոյլ եմ տուել անճիշտ տեղեկութիւններ հաղորդել» վերագրելով կուլտուրական միութեան մօտ 2 միլիոն ռուբլի Անդրկովկասի ժողովրդին նպաստ տալու գործը։ Իսկ արդյոք խմբագրութիւնդ ծանօթութեան մէջ զարմանք է յայտնում իմ և պ. Խատիսեանի վարմունքի վրա։

Թոյլ տուէք խնդրեմ այդ ահիթով ձեր թերթի միջոցով փոքրիկ բացատրութիւն տալ։

Նախ՝ սխալ է պ. թղթակցի լուրը, որ ես կուլտուրական միութեանն եմ վերագրել նպաստի գործը. այլ ես իմ քարոզիս մէջ ի միջի այլոց ասել եմ, որ «կուլտուրական միութիւնը ուրիշների հետ միասին մեծ հանդէ է ցոյց տուել մօտ 2 միլիոն ռուբլի նպաստ ստանալու գործում Անդրկովկասի անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեան համար»։

Երկրորդ՝ հրապարակական այդպիսի յայտարարութիւն անելու ինձ իրաւունք են տուել ինձ յայտնի հետևեալ փաստերը։

ա) Ի. Հ. Կ. Միութեան հողային սեկցիայի ընդհանուր ժողովում, որ կայացել է 1907 թ. յունվարի 16-ին, որոշված է եղել. «Գործադրել ամեն ջանք, որպէս զի կառավարութիւնը օգնութեան հասնի քաղցած ազգաբնակութեան»։

բ) Նա եռանդուն պրօպագանդա է արել երկրորդ Դումայի անդամների շրջանում, թէ անմիջապէս և թէ այդ ժամանակ կ. միութեան տրամադրութեան տակ գտնվող պ. Ս. Զաւարեանցի յատուկ այդ առիթով գրած բրօշիւրով, որ ունի հետևեալ վերնագիրը. «Տնտեսական դրութիւնը Զանգեզուրի և Ղարաբաղի գաւառներում 1906—7 թւականին և սովը»։ Պրօպագանդայի համար պ. Ս. Զաւարեանը կուլտուրական միութեան յանձնարարութեամբ եղել է Պետերբուրգում։

գ) Պատճառաբանված շրջաբերական կոչը, որ արել է անցեալ տարվայ հոկտեմբերի վերջին Բագուի նպաստամատոյց յանձնաժողովը. ինչպէս յայտնի է, այդ յանձնաժողովի մէջ է մտած կուլտուրական միութեան հողային սեկցիան և կոչի տակ ստորագրել են պ. պ. Բ. Իսլուխանեան, Կ. Խատիսեան և Ա. Ղուկասեան։

դ) Ի վերջոյ անյայտ չէ արդոյ խմբագրութեանդ, որ Թիֆլիսի և Բագուի նպաստամատոյց յանձնաժողովները անկախ իրարից կազմել էին կոչերը և տուղերիս գերրողը «Մշակի» խմբագրութեան մէջ յայտնեց Բագուի նպաստամատոյց յանձնաժողովի գրած կոչի մասին, որից յետոյ երկու քաղաքի յանձնաժողովները բանակցութեան մէջ մտան իրար հետ պատգամաւորութիւն կազմակերպելու Փոխարքային ներկայանալու համար։

Կարծում եմ, որ այս բոլոր ասածներից յետոյ պ. թղթակցի գրածը կորցնում է իր արժէքը։

Մատթէոս վարդապետ

—

Բարսում գ. (Դանձ. գ.), 17 ապր.

Բագուում գտնվող մեր գիւղացի գետաբեկցի երիտասարդները կազմել են մի փոքրիկ ընկերութիւն իրանց սեփական սուղ միջոցներով, որի նպատակն է նպաստել գիւղացիներին ամտեսապէս և կրթութիւն տարածել։

Անցեալ 1907 թւականի հացի պակասութեան պատճառով սկսեցին Բագուից ու Իրևանից հաց ժամտարել և ժամտարապէս 10 վագոն ալիւր և ցորեն հասցրին ու տեղական գնից 20% պակաս ծախելով՝ մի փոքր գոնէ թեթևացրին խղճ ժողովրդի դրութիւնը, չը մոռանալով իրանց ծնողավայրը ու գիւղիս չքաւոր դասակարգը։ Զատկական տօներին նպաստ տուին գիւղիս չքաւորներին քսան պուդ ալիւր պ. Հ. Մելիք-Առստամեանցի կողմից, ինչպէս անցեալ 1906—1907 թւականներին նոյն չքաւորներին նպաստ են տուել 400 ռ. և 40 պուդ ալիւր բագուաբնակ գետաբեկցի երիտասարդների կողմից։ Մարին շնորհակալութիւն ենք յայտնում պ. Հ. և տ. Մ. Մելիք-Առստամեաններին ու Բագուի գետաբեկցի երիտասարդութեան՝ որոնք չեն զլանում օգնութիւն հասցնելու իրանց սուղ միջոցներից գիւղիս չքաւորներին։

Ի դիմաց ժողովրդի՝

Մ. Ուղուլեանց

—

Երևան, 19 ապրիլի

Երևանի արժանապատիւ Յովսէփ աւագ քահանայ Մելիանցի քահանայագործութեան 50-ամեայ յօբելեանը պէտք է կատարվէր առաջիկայ մայիս ամսի 1-ին, սակայն եղանցն այնպիսի անակնկալ և խոշոր պատճառներ, որոնք հարկադրեցին այդ յօբելեանը դարձեալ յետաձգել մինչև աշնան սկիզբները։

Յօբելեանի նախապատրաստութիւնների համար կազմված ժամանաժողովը պարտք համարելով իրան՝ յայտնել այս մասին և գիտութիւն հայ, մանաւանդ ծանօթ շրջաններին, պատիւ կունենայ նաև ժամանակին յօբելեանի կատարման համար որոշված ճիշտ ամիսն ու ամսաթիւը նոյնպէս կանխօրէն յայտարարել։

Մանանաժողովի նախագահ՝

Վահան ա.-ք. Վաչէեան

Անդամներ՝

Գրիգոր ա. ք. Սուքիասեան, Կորիւն ք. Պանճուլաղեան, Արզար Ս. Գուլամիրեան, բժ. Յովհաննիսեան, Դ. Պապով, Յովսէփ Տէր-Յովսէփեան

—

Բաքու, 10 ապրիլի

Թելաւեցի պ. Նիկոլայ Տէր-Սահակեանցը իր հանգուցեալ կնոջ՝ Կատարինէի թաղման ժամանակ փոխանակ հացկերոյթի (քէֆէս) ըստ իմ յորդորանաց նուիրեց յիսուն ռուբլի, որից 25 ռուբլին չքաւոր աշակերտի թոշակ, իսկ 25 ռ. հայ սովեալների օգտին։ Արդէն յանձնել եմ 25 ռ. գիմնազիայի վարչութեան, իսկ 25 ռ. ուղարկելով ձեզ, խնդրում եմ մասնագրել 10 ռ. կովկասահայ սովեալների օգտին, իսկ 15 ռ. Թիւրքահայ սովեալների օգտին։

Աբգար աւ.-ք. Տէր-Յարութիւնեան

—

Սամարղանդ, 19 մարտի

Բաքուի հայոց կուլտուրական միութեան օգտին փող հանգանակող պատուիրակները՝ Մատթէոս վարդ. Մատթէոսեան և պ. Կ. Խատիսեան եկան և մեզ մօտ։ Դալու երկրորդ օրը՝ վարդապետն իր եղբայր Արշ. Մատթէոսեանի միջոցով՝ քաղաքիս հայ ունևոր դասակարգին՝ ժողովի էր հրաւիրել իր ինչահան համարները։ Սակայն թէ առաջինի հրաւէրը և թէ երկրորդի յորդորական դիմումները մնացել էին «ձայն բարբառոյ յանապատի»։ Ժողովին հաղիւ հաւաքվել էին 10—12 մարդ։

Եկողներին՝ երեկոյեան ժամը 7-ից մինչև 9½-ը սպասել տալուց յետոյ, հայր-սուրբը ժողովը բացեց և սկսեց իրանց պատուիրակութեան նպատակի մասին ճառել։ Խնայելով «Մշակի» սուղ էջերը, մենք նրա ասածից միմիայն կը յիշենք այն անճիշտ տեղեկութիւնների մասին, որոնց Մ. վ. իրան թոյլ տուեց հաղորդել ժողովականներին։ Նա կուլտուրական միութեանը վերագրեց այն գործը, որ կատարել է Թիֆլիսի կենտ. Նպաստ. Յանձնաժողովը, այն է՝ Անդրկովկասի ժողովրդին հացի և սերմացուի համար մօտ 2 միլիոն փոխառութեան գործը։ Ինչպէս երևում է՝ նա նոյնը ասել է Անդրկասպեան և միւս քաղաքներում, որոնց մասին մենք տեղեկացանք դու. երթևեկ առևտրականներից, ապա՝ «Մշակի» Մերվի թղթակցից (№ 60)։

Այնուհետև նա՝ ի միջի այլոց, այնքան ուռեցրեց և փարթամացրեց կուլտ. միութեան կատարած՝ հայ ժողովրդին օգնութեան գործը, այնքան վառ գոյներով նկարագրեց միութեան անցեալը, ներկան և ապագան, որ մարդիկ պիտի կարծէին թէ՝ առանց այդ միութեան հայերին չէք փրկվիլ։ Մինչև իսկ նրանից ոգևորված՝ պ. Կ. Խատիսեանն էլ աւելացրեց թէ՝ Կովկ. հայոց բարեգ. ընկերութիւնն անգամ իր ժամանակին ոչ արել է և ոչ էլ նոյն նորակազմ ընկերութիւնը պիտի կարողանայ անել այն՝ ինչ որ իրանք են կատարելու։

Յետոյ նրանք առանձնացան, որպէսզի ժողովականները կարծիքների փոխանակութիւն ունենան։ Եւ ժողովականները զինչելով նրանց կրկնած—«հազարաւոր վերստեր կարել-եկել ենք ձեր նուէրների յոյսերով»—բառերին, որոշեցին յօգուտ ընկերութեանը հաւաքել 1000—1500 ռուբլի։ (որը հաղիւ պիտի հաւաքվէր մեր փոքրիկ գաղութում), երբ սոյն որոշումը պատուիրակները իմացան՝ անչափ նեղացան այդօրինակ որոշման համար, համարելով 1000 ռուբլին հ. ս.-ի արտասանած ճառին և իրանց հասցէին վիրաւորանք։ Երկար խորհրդակցութիւնից յետոյ, ի միջի այլոց, պարզվեց մի տարօրինակ բան. վարդապետի եղբայր պ. Ա. Մատթէոսեանը ինքնուրոյն կերպով կազմած և ներկայացրած է եղել նուիրաբերութեան մի ցանկ, և պնդել է պատուիրակներին, որ իր խօսքից դուրս չը գան, հաւատացնելով նրանց՝ թէ այդքան գումար հեշտութեամբ կը հաւաքվի Սամարղանդում (մօտ 4000 ռ.)։ На чужой счетъ արած այդ անհամապատասխան բաշխումը ժողովականների մէջ մեծ խլրտում և անհամութիւն առաջ բերեց։ Երբ պ. Ա. Մ.-ն՝ չափազանց ոգևորվելով մրութեան մասին ճառողների վառվռուն ներբողներով՝ իրան իդէական բարձրութիւններում է զգացել և Մարսի մոլորակներով շփոթել պատուիրակներին։

Ժողովականները վիրաւորվելով պարոնի կազմած ռուս ու սլաւ ցանկի համար, առաց մի որոշման թողին ու հեռացան, ասելով թէ՝ պատուիրակները թող այցելութեան գնան զանազան տներ, ուր ինչ կը տան նրանց, այն էլ կը լինի ճիշտն ու ուղիղը։

Յաւում ենք սակայն, որ յիշեալ պ. Ա. Մ.-ն ձեռք չէ վերցնում իր ազգ սովորութիւններից և ամեն տեղ և ամեն անգամ ժողովրդի մէջ խռովութիւնների պատճառ է դառնում։ Առաջ էլ նա էր, որ կաթողիկոսի մահվան օրերին՝ ինքը հնարել և ինքը հերքել էր՝ օրէնս թէ քաղաքումս «Մշակը» ձեռքից ձեռք շրջում են և արհամարհում, մինչդեռ այդպիսի բան չէ եղել մեզանում և մինչև էլ «Մշակը» կարդացվել է մեծ հաճոյութեամբ։ Նա էր, որ ինքը նոյն գիշերը ցերկումն էր և հայոց երեկոյթի մասին սուտ ու սխալ տեղեկութիւններ էր հաղորդել «Մշակին» և՝ մեզանում դայրոյթ առաջացնելով իր դէմ՝ ափսոսանք յարուցեց «Մշակի» սուղ էջերը այդօրինակ անճշտութիւններով լցնելու համար։ Նա էր, որ տեղիս ծխական հայոց գպրոցի աշակերտաց հոգաբարձութեան և անձնուէր ուսուցչի մասին սուտ ու սխալ տեղեկութիւններ էր հաղորդել, որոնց նոյն հոգաբարձութիւնը պաշտօնապէս հերքեց և «Մշակի» ընթերցողների առաջ ճշմարտութիւնը պարզեց։ Նա էր, որ մեր ծխական երրորդ ժողովը քայքայելու նպատակով հեռացաւ ժողովից՝ կարծելով թէ ժողովականները կը հետևեն իրան և դպրոցի սեփական շէնք շինելու հարցը կը մեայ անորոշ։

Եւ ահա այսօր էլ նա եղաւ պատճառը՝ նախ կուլտ. միութեանը նիւթական վնաս հասցնելով իր անտեղի ցանկով, երկրորդ՝ որ «Մշակի» ընթերցողների և խմբագրութեանդ առաջ պարզել ուզեց իր զիմակը։

Սոյն նամակով կարծեմ որ դէմ պիտի մնան մեր տեղիս «Մշակի» ընթերցողները՝ Ա. Մ.-ի արարմունքը բացայայտված տեսնելով, և մանաւանդ յարգելի խմբագրութիւնդ պիտի կարողանայ ճանաչել իր սուտախօս թղթակցին և ազգի հասուցածը տալ նրան։

Վ.-Պ.

—

Էջմիածին, 6 ապրիլի

Խնդրեմ բարեհաճեցէք տեղ տալ երկտողիս ձեր լրագրում, ի հարկէ նոյնութեամբ։

Հանգուցեալ Մկրտիչ Արիւեան կաթողիկոսը, իր և մանաւանդ անկուշտ մերձաւորների արծաթամոլութեամբ յանախելով ամուսնութիւնները լուծանելը՝ առիթներ տուեց ծանր բողոքների, որոնց հետևեց Բարձրագոյն կարգադրութիւն, որով ամուսնալուծութեան գործերի վճռանութիւնը անցաւ Էջմիածնի սինոդին։ Կաթողիկոսը թողուցեալ այդ հոգեոր խնդիրների իր՝ օրէնքով սահմանեալ՝ իրաւունքի խախտելու մասին, քանիցս դիմեց ներքին գործերի մինիստրին, այլև Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրին։ Վերջ ի վերջոյ գործը յանձնվեց սինոդին, որը բացատրեց, ի միջի այլոց, թէ՝ «ամուսնալուծական գործերը, աւելի արդարութեամբ վախճան ստանալու համար՝ թողնել էջմիածնի Սինոդին, որպէս կօլեգիալ հաստատութեան, որի նախագահը, ինքը կաթողիկոսը լինելով, նրա համաձայնութեամբ էլ կը վճռվին այդպիսի գործերը»։

Արդ, ինչպէս «Արարատի» (յունվար, փետրվար, մարտ) պաշտօնական բաժիններում կարդում և տեսնում ենք, կաթողիկոսի վախճանվելուց յետոյ ևս մեր սինոդը շարունակում է ցայսօր ամուսնութիւններ լուծանել, որով, ինչպէս կարծում եմ՝ անտես է առնվում ոչ միայն օրէնքը (տես պօլ.ժենիա յօդ. ժ. իե. լդ. լե. խ. խա.), այլև նոյնիսկ սինոդի յիշեալ բացատրութիւնը։

Ես կարծում եմ, որ պէտք էր դադարեցնել սինոդում այդօրինակ, ըստ իմ՝ ոչ-օրինական վճռանատութիւնները, մինչև կաթողիկոսի հաստատութիւնը (յօդ. խբ.)։

Ճշմարիտ է, վերջին կարգադրութեամբ և սինոդի բացատրութեամբ՝ կարճված է կաթողիկոսի եղակի վճռանատական իրաւունքը ամուսնալուծական գործերում, սակայն վերապահված է նրան, և միայն նրան, այդպիսի վճիռներին դնել նախագահել...

Բարդ. եպ. Գէորգեան

—

Մերվ, 15 ապրիլի

Քաջ լրագրող Արփիարի պէս մի անվեհեր գրչի զինուոր արիկներից գնդակահար եղաւ փարաւօնների երկրում։ Երկու ձեռքով ստորագրելով Թիֆլիսում կայացած լրագրողների բողոքագրի տակ, ուղարկում եմ խմբագրութիւնդ տաս և մէկ ռուբլի (11 ռուբլի) Արփիարի մահարձանի օգտին, որ ես ստացայ Զատկի շնորհաւորութեան առիթով իմ այցելած այն յարգելի անձերից, որոնց անուանացուցակը և գանձվելիք փոդերը մի համեստ գումարի հասցնելուն պէս կուղարկեմ յարգելի խմբագրութեանդ։

Ղազ. ք. Յովսէփեան

—

Թիֆլիս, 21 ապրիլի

Որովհետև Կովկասեան հայոց բարեգործական ընկերութեան խորհուրդը իր վերջին նիստերից մէկում գտել է, որ ընկերութեան անուամբ ներս մտած բոլոր թղթերը կազմում են նրա սեփականութիւնը, և ոչ ոք իրաւունք չունի նրանցից օգտվելու, ուստի ցաւելով յայտնում եմ, որ «Մշակի» մէջ տպված՝ իմ խմբագրութեան ուղղած նամակի մէջ բերված Ներսիսեան դպրոցի հօթերորդ դասարանցու տուած խնդրից օգտվել եմ առանց խորհրդի դիտութեան *)։

Ռ. Շահնազարեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԳԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ղօչան, 2 ապրիլի

Ղօչան քաղաքը Խօրասանի նահանգի աչքի ընկնող վաճառաշահ վայրերից մին լինելով՝ հայ վաճառականները աչքաթող չեն արել, և այսօր այդտեղ ապրում են մօտաւորապէս քառասուն հոգի, որոնցից մի քանի հոգի իրանց ընտանիքով. սրանք գլխաւորապէս եկած են Թաւրիզից և Գողթան ու Շուշու գաւառից։

Սրանց գլխաւոր զբաղմունքն է տարբեր առևտուրը, որից ահագին քանակութեամբ

*) Զարմանալի է խորհրդի վարմունքդ՝ հետևել բիւրօկրատական ձևերին։ Ամեն մի հասարակական հիմնարկութեան դռները լայն կերպով պէտք է բաց լինեն ուսումնասիրողների առաջ։ Թիֆլիսի քաղ. դուման ոչ մի արգելք չէ տեսնում լրագիրների թղթակիցների առաջ գնել իր բոլոր գործերը, նրանցից օգտվելու համար։ Ջանասիրանքի մղիչը գուցէ միայն նրանումն է, որ նա օգտվել է թղթից, առանց նախագահին կամ քարտուղարին յայտնելու, բայց եթէ խորհուրդը գտնում է, որ ընկերութեան գործերը անմատչելի պէտք է մնան հասարակութեան համար, նա մեծապէս սխալվում է՝ ընդունելով այդպիսի բիւրօկրատական հակացողութիւն։ Խմբ.

արտահանում են դէպի Ռուսիա։ Արտահանելի ապրանքներից աչքի է ընկնում և ցորենն ու գարին, որ այս վերջին տարիներն արգելված էր, բայց այս տարվանից կառավարութիւնը ժամանաւորապէս թոյլ է տուել ներածում են Ռուսաստանից մեծ քանակութեամբ ժանուփակտուր, շաքար, նաւթ և այլ նիւթեր։ Բացի այս առևտուրներից մի քանի հոգի էլ զբաղվում են օդեվաճառութեամբ, որն իր շահաւէտութեամբ այնքան է գրգռել այդ գործով զբաղվողներին, որ առանց կարիքելու և խղճի դէմ մեղանչելու, գրեթէ կէս մասը ջուր են խառնում և իսկական օդու գնով վաճառում. ծախում են և գինի, որին աւելի շուտով քացախ կարելի է անուանել։ Այս վաճառականները կարճ ժամանակի մէջ ոչնչից իրանց համար մի-մի կլորիկ գումարներ են դիզել։ Թաւրիզեցի հայ վաճառականները մի քանի տարիներ առաջ բաւականաչափ բարձր անուն և պատիւ են ունեցել, բայց այսօր, շնորհիւ 1900 թ. կրած անաջողութեանց, մի կերպ քարշ են գալիս։

Շնորհիւ թէհրանցի հայ քահանայ Խաչատուր Խաչիկեանի յորդորանաց, 1905 թուից այստեղ հիմնված է մի գրադարան-ընթերցարան «Խրիմեան» անուամբ, ուր կան 3—400 կտոր գրքեր, և ստացվում են մի քանի հատ հայ, ռուս և ֆրանսերէն լրագիրներ։ Որչափ կարողացայ մօտիկից ծանօթանալ և տեղեկանալ, մի տարի առաջ բաւականին ծագած վիճակի մէջ է եղել գրադարան-ընթերցարանը, բայց այժմ նրանով հետաքրքրվող չը կայ. գոնէ 20 օրանով հետաքրքրվող չը կայ. գոնէ մի անգամ չը տեսչափ մնալով Ղօչանում՝ մի անգամ չը տեսայ, որ մի հոգի մանէ գրադարան-ընթերցարան, գիրք կամ լրագիր վերցնելու, չը նայելով որ բաւական վարձուչ կահաւորնայելով որ բաւական վարձուչ կահաւորված սենեակ ունի։ Դրա պատճառը մասամբ գուցէ և գրադարանապետն է, որը չափից դուրս անհոգաբար է վերաբերվում դէպի իր պաշտօնը. նա բոլորովին հոգ չէ տանում, որ լրագիրները կանոնաւոր պաստից ստացվեն, և թոյլ է տալիս, որ ամեն մարդ գնայ և ստանայ պաստից իր ուզածը։ Հետաքրքրվողը կարող է նկատել, որ մի քանի լուսաժուռներ նոյնիսկ թղթած են այդ լրագիրներով...

Պօղոս Սարգսեան

—

Թաւրիզ, 17 ապրիլի

Ապրիլի 6-ին Վիեննայում կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Մարգար Նաղարբէգեանը։

Ամսիս 9-ին Բերդաթաղի ս. Աստուածածին եկեղեցում խուռն բազմութեան ներկայութեամբ կատարված հոգեհանգստի ժամանակ յայտնի եղաւ, որ հանդուցեալի եղբայրները, ի յիշատակ իրանց եղբօր, մեր կրթական և հասարակական հաստատութիւններին հետևեալ նուիրատուութիւններն են անում։ Ազգայ կենտրոնական դպրոցին 1000 ր., հայուհեաց բար. մ. ընկերութեան՝ 200 ր., Թաւրիզի աղքատախնամին՝ 100 ր.։ Այս նուիրաբերումը գեանների կողմից առաջինը չէ. նրանք միշտ իրանց սրտին մօտ են պահել մեր կրթական և բարեգործական հաստատութիւնները, իրանց անմիջական մասնակցութեամբ և հովանաւորութեամբ զարգ են տուել այդ հիմարկութիւնների բարգաւաճմանը։

Ի դէպ. կենտրոնական դպրոցի բացումը և ապահովումը ներկայումս օրվայ հրատապ հարցն է մեզանում և բոլոր մտքերը զբաղեցնում է. այդ խոշոր հաստատութիւնը մասնաւորապէս թեմիս առաջնորդ Կարապետ վարդապետի գուրգուրանքի և հոգացողութեան առարկան է դարձել։ Մենք խորապէս հաւատացած ենք, որ հայրասիրի ջանքերը աջողութեամբ կը պսակվեն։ Այս առիթով աւելորդ չենք համարում դարձեալ յիշեցնել և կրկնել մեր պարսկահայ Ռուսաստանում և այլուր բնակվող հայրենակիցներին, որ փութան իրանց նիւթական նպաստներով՝ հայրենի աշխարհում վառելու լուսաւորութեան մեծ ջահը։

Ռ. Մ...եան

ՆՈՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Ուստր, 14 ապրիլի (Ն. տ.)

Ամսիս 12-ին, կիրակի, առ. ժամը 5-ին, վիթխարի հրդեհ ծագեցաւ Բոստըն քաղաքի Զըլսի «Chelsea» կոչուած քաղաքամասը, որուն ճնասը թէև ճշտօրէն պարզուած չէ, բայց միջին հաշուով տեղական թերթերը հետևեալ ցանկը կուտան.

Ստացուածքի ոչնչացում՝ 10—12,000,000 դոլլար *), շինութիւններ վառուած՝ 1500, առանց տունի անձինք՝ 10,000, յայտնի մեռած՝ (1 այր և 5 կին) 6, ճնասուած՝ 300, կորսուած՝ հարիւրաւոր, եկեղեցիներ վառուած՝ 13, դրամատուներ՝ 3, դպրոցներ՝ 7, մեքենական տուներ կործանուած՝ 3, փճացած հրդեհի շոգեմեքենաներ՝ 3, հրդեհի տարածութիւնը (արտավայր անգլիական) 482 acres.

Քաղաքթաղը պատերազմական վիճակի մէջ հրատարակուեցաւ նոյն օր երեկ. 10 ժ. 15 ր.։ Շինութիւնները մեծ մասամբ ապահովագրուած էին։ Նպաստները կարկուտի պէս սկսած են տեղալ թէ կառավարութեան կողմէ և թէ հասարակութենէն, ինչպէս թատրոնները և ուրիշ ժամանցի տեղերը մէկ-մէկ օր են յատկացուցեր նպաստելու ճնասուողներուն։

Վերոյիշեալ թաղի մէջ ապրող հայերը բաւական մեծ նիւթական ճնաս են կրեր։ Բարեբաղդաբար մինչև այժմ մարմնապէս ճնասուածներու կամ մեռեալներու ցանկին մէջ հայի մը անունն չկայ։

Դեռ որոշ բան մը յայտնի չէ հրդեհի սկզբնապատճառին մասին, բայց կըսուի, որ հրդեհը հրէայի մը տունէն ծագում առած է։ Հրդեհը ամբողջ թաղը լափելուն օգնեց սաստիկ քամին, որ քանի մը օրէ ի վեր կը փչէր շարունակ։

Ե. Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անիշխանականները Անգլիայում.—Միացեալ-Նահանգների նախագահ Ռուզվէլտի փչած փողը, որը պահանջում է նոր օրէնքներ անիշխանականների դէմ, արձագանք գտաւ և Անգլիայում, մարդկութեան այդ թշնամիների սիրած ապաստարանում։ Հալածված ուրիշ երկիրներից, նրանք աւելի ևս մեծ թիւով կուտակվում են Անգլիայում, և այդ բանից ահաբեկված ոստիկանութիւնը, ոչինչ ակտիվ միջոցներ ձեռք չառնելով նրանց դէմ, ուշի ուշով հետևում է նրանց իւրաքանչիւր քայլին. անիշխանականների վրա հսկում է մի առանձին բրիգադա Սկոտլանդ-Եարտում։ Լօնդօնի անիշխանականները մի քանի խմբի են բաժանված, որոնցից գլխաւորը—ազատութեան լիգան, որը հրատարակում է «Liberté» ամսագիրը և տարածվում է 2000 օրինակ։ Օտարազգի թագի շուրջը ապաստանվել են ֆրանսիական գերժամական, իտալական և սպանիական անիշխանականների խմբակները. քաղաքի արևելեան մասում գտնվում է հրէական կօլօնիան, որն ունի կլուբ և երկու լրագիր։ Ընդամենը Լօնդօնում ապրում են մինչև 4000 անիշխանականներ. նոյնքան կան և գաւառական Լիվերպուլ, Շեֆֆիլդ, Գլասգօ, Գուլլ, Մաչեստէր, Նորվիչ և այլ քաղաքներում։

—

Ֆրանս-գերմանական դաշնագիր.—Բերլինի ֆրանսիական դեսպան Ժիւլ-Կամբոն և արտաքին գործերի պետական քարտուղար Շէն ստորագրեցին մի դաշնագիր, որով որոշում են նոր սահմանները գերմանական Կամէրուն կօլօնիայի և Կոնգոյի ֆրանսիական կայուածքների միջև։

Զօլայի արձանի բացումը Սիւրէնում.—Զօլայի արձանը բացվեց երկուշաբթի, ապրիլի 31-ին։ Արձանը քանդակագործ Դէրրի և ճարտարապետ Լօգասսի գործ է և ներկայացնում է գրողի կիսարձանը, դրված սիւնի վրա, որը գրանիտի հիմք ունի։ Նախաձեռնող կոմիտէն ցանկանում էր այդ արձանի համար գործ դնել տեղական հին քանդված եկեղեցու զանգերից մէկը, ցոյց տալով դրանով ճշմարտութեան և լոյսի յաղթանակը դարաւոր նախապաշարումների վրա, սակայն տեղական կաթոլիկները բողոքեցին մի այդպիսի սրբապղծութեան դէմ։

Խօսեցին ճառեր տեղական իշխանութեան ներկայացուցիչները և մարդկութեան իրաւունքների լիգայի կողմից խօսեց Լուի Դաւվէ, գովաբանելով այդ «զուտ աշխարհական տօնը». մասնացոյց էր անում նաև իտաստարդութեանը Զօլայի վրա, որպէս այն օրինակի վրա, որ ճշմարտութեան և սիրոյ մէջն է պարունակվում իսկական բարոյական վերութեան աղբիւրը։ Երաժշտութիւնը «մարսէլիէզ» էր նուագում արձանի բացման ժամանակ։

Զօլայի նեխարների փոխադրումը Պանսկօն.—«Journ. Officiel» լրագիրը հրատարակեց 35,000 ֆրանկ՝ կրէդիտ բանալու օրէնքը Զօլայի նշխարքը Պանթէօն փոխադրելու համար։ Միևնոյն ժամանակ պաշտօնապէս յայտարարվեց, որ փոխադրութեան հանդէսը նշանակվում է յունիսի 4-ին (Ն. տ.)։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

22 ապրիլի

ԿԻԵՎ։ Տարրական կրթութեանը նպաստող Կիեվի ընկերութիւնը ամառնային արձակուրդների ժամանակ հանրակրթական դասընթացքներ է կազմակերպում ժողովրդական վարժուհիների համար։

23 ապրիլի

ՕԴԵՍՍԱ։ Նահանգական զէմստվային ժողովը, ի նկատի ունենալով որ օրըստօրէ յանցագործութիւնները ընդարձակ չափեր են ընդունում, 10,000 բուբլի յատկացրեց Օդեսայի ոստիկանութիւնը ուժեղացնելու համար։

ՈՒԺԱՆՏՕՊՕԼ։ Բացվեց զինուորա-ծովային ժամանաժողովի նիստը, որի նախագահն է սև-ծովեան նաւատորմի գլխաւոր հրամանատարը։ Մամնաժողովը նպատակ ունի մշակել զինուորա-ծովային գործի այն հարցերը, որոնք կապ ունեն վերջին պատերազմի փորձերի հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Զինուորական դատարանը, քննելով Պետերբուրգի ժամանաւոր լոմբարդներից մէկի վրա զինված յարձակում գործելու գործը, ութ մեղադրեալներից չորսին դատապարտեց մահվան պատժի, երկուսին—15-ական տարի ակիր աշխատանքների, մէկին—հինգ տարով բանտարկութեան, մէկին էլ արդարացրեց։

ԿԷԼՁԻ։ Զերբակալվեց ուսումնարանական վարչութեան կառավարիչ Աֆանասիևի վարդասպարը։ Նա տեղացի կօշկակարներից է։

Արտաքին

22 ապրիլի

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ։ Ֆօլկէտինգը երեկոյեան նիստում վերջնականապէս ընդունեց մաքսային տարիֆի օրինագիծը։

23 ապրիլի

ԼՕՆԴՕՆ։ Այն հարցին՝ թէ ինչպիսի միջոցներ են ձեռք առնվելու վերջերս խորտակված երեք զինուորական նաւերի համար բաւարարութիւն տալու, ծովակալութեան առաջին լորդ Մակ-Կէնին համայնքների պալատում պատասխանեց. «Անգլիական նաւաշինական ծրագիրը չէ պարփակված ամպլիսի անձուկ շրջանակում, որ կորցրածը անմիջապէս փոխարինելը հրամայողական պահանջ դառնայ, սակայն ծովակալութիւնը այնուամենայնիւ հոգում է այդ ճնասը հատուցանելու»։

ՏՕԿԻՕ։ Մամուլը, ցաւակցութիւն յայտնելով դեսպան Բախմէտիևի հրաժարականի առիթով, միևնոյն ժամանակ ողջունում է Մալէվսկի-Մալէվիչին դեսպան նշանակելը։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ։ Բէյլստագը վերջնական ձևով ընդունեց սպիրտի ակցիզը բարձրացնելու օրինագիծը, իբրև ներհակ սպիրտի մաքսային տուրքը բարձրացնելու նոր օրէնքին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՄԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆՈՒՄՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ.-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներակ., միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Օլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—38

ԵՐԿԱԹՈՒՂԻ
Գնացքների ամառնային երթևեկութիւն
(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը՝ Թիֆլիսի ժամանակով)

	ԱՐԱՐ	ԱԲԱՐԱՇՈՒՆ	ՊՕՍՏԱՏԱՐ	ՄԱՐԴԱՏԱՐ	ՍԳՈՐ.-ՄԱՐԴԱՏ.
Բաղուից դուրս գալը. . .	—	4 ժ. 10 ր. ցեր.	11 ժ. 8 ր. առ.	5 ժ. 24 ր. առ.	—
Թիֆլիս հասնելը	—	8 ժ. 30 ր. առ.	5 ժ. 59 ր. առ.	10 ժ. 52 ր. երեկ.	—
Թիֆլիսից դուրս գալը.	(9 ժ. 3 ր. երեկ.)	—	(7 ժ. 47 ր. առ.)	(12 ժ. 28 ր. գիշ.)	—
Բաթում հասնելը	7 ժ. 14 ր. առ.	—	8 ժ. 40 ր. երեկ.	12 ժ. 36 ր. ցեր.	—
Բաթումից դուրս գալը.	11 ժ. երեկ.	—	7 ժ. 1 ր. առ.	5 ժ. 57 ր. երեկ.	—
Թիֆլիս հասնելը.	9 ժ. 44 ր. առ.	—	8 ժ. 38 ր. երեկ.	7 ժ. 22 ր. առ.	—
Թիֆլիսից դուրս գալը.	—	(11 ժ. 21 ր. գիշ.)	(10 ժ. 36. ր. երեկ.)	(8 ժ. 58 ր. առ.)	—
Բաղու հասնելը. . . .	—	1 ժ. 35 ր. ցեր.	4 ժ. 45 ր. ցեր.	12 ժ. 57 ր. գիշ.	—
Ջուլֆայից դուրս գալը.	—	—	5 ժ. առ.	—	—
Երևանից դուրս գալը. .	—	—	—	—	9 ժ. 27 ր. երեկ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	—	—	7 ժ. 59 ր. երեկ.	—	5 ժ. 30 ր. առ.
Թիֆլիս հասնելը. . . .	—	—	5 ժ. 28 ր. առ.	—	3 ժ. 30 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը. .	—	—	(12 ժ. 53 ր. գիշ.)	—	(11 ժ. 48 ր. առ.)
Ալէքսանդրօպօլ հասնելը.	—	—	10 ժ. 21 ր. առ.	—	9 ժ. 53 ր. երեկ.
Ջուլֆա հասնելը.	—	—	11 ժ. 47 ր. գիշ.	—	—
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	—	—	10 ժ. 50 ր. առ.	—	10 ժ. 15 ր. երեկ.
Կարս հասնելը.	—	—	2 ժ. 9 ր. ցեր.	—	1 ժ. 49 ր. գիշ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, ապրիլի 24-ին, ընտանեկան երեկոյթ պ.-պ. անդամների, կանդիդատների, ընտանիքների և հիւրերի համար. պ. Թ. Ա.
„ՍԻՆԷՄՕՏՕԳՐԱՖ“
3 բաժանմունքով։
Սկիզբն է 9½ ժամին երեկոյեան։

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-ի
ՓՈՔՐՈԳԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ
գրքոյկը (սակաւաթիւ) 64 էջ, 15 կոպէկ։ Միւս 16 գրքերի հետ վաճառվում է գրախանութներում։

ԼՈՅՕՏ ՏԵՍԱՒ
Ա. ՉԱՆԵԱՆԻ
ԲԱՑՎՈՂ ԾԱՂԻԿՆԵՐ
Գինը 50 կոպ.։ Ծախվում է Բաղուի և Թիֆլիսի գրավաճառների մօտ։
(օ. ժ.) 6—3

Մի ծերունի, որի կինը վախճանվել է, ունի մի աղջիկ 5 տարեկան և մի տղայ 3 տարեկան, խնդրում է բարերար անձերին օգնեցեք նրանց, որովհետև ինքը հնարաւորութիւն չունի նրանց պահել իր մօտ։ Հասցէն՝ Սրբոյ-Կարապետեան փողոց № 7, Տիգրան Պողոսեանցի։
(ս. ջ.) 2—2

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Պրէյսկուրանտեն ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмяннаго Хозяйства Квеесъ и К°
Тифлисъ, Михайловск. пр. № 55.

ՋԱԽԱՐ ՄԻՆԱՅԵՎԻՉ ՋԱՆՓՕԼԱԴԵԱՆԻ
ԳԱՌԱՆԳՆԵՐԸ
Ծանուցանում են, որ Երևանի երկաթուղու Արաքս կայարանում կայ ԿՈՂԲԻ ընտիր աղի ահագին պաշար՝ սպիտակ (աղուճակի), խաչքարի և վառօդաձիգի։
Պատուիրած կամ հասարակ նամակներով և կամ հեռագրով դիմել՝ Ст. Араксъ [Э. Ж. Д.] Маргаритѣ Захарьевнѣ Джанполадовой, իսկ կանխավճարը պատով կամ հեռագրով փոխադրել՝ въ Александрополь, Маргаритѣ Джанполадовой.
Յ. Գ.—Մնգրում ենք չը շփոթել մեր ֆիրման նոր կապալառուների ֆիրմայի հետ, որոնց աղ ուղարկողն էնոյն աղգանունն ունեցող Ս. Զանփօլադեանը։
(օ. մ.) 3—1

ԹԻՖԼԻՍԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ցանկանալով ամառվայ ամիսներում բանալ իր արհեստանոցի ճիւղը
ԳԻՒՂԱԿԱՆ ՁՐՋԱՆՆԵՐԻՑ ՄԷԿՈՒՄ
դիմում է հասարակութեանը, խնդրելով դրամական աջակցութիւն այդ դիտաւորութիւնը իրագործելու համար։
Նպաստները հասցնել տնայնագործական ընկերութեան վարչութեան կամ «Մշակի» խմբագրութեան։

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։

ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.
Իսկականը այս կէնյոն ունի իր վրա։
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ“
ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ ՐԻԳԱՅՈՒՄ ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ ՕԴԵՍՍԱՅՈՒՄ ՐՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՏԱՇԿԷՆՏՈՒՄ
Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ.
ԱՅԳՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
(հ. կ.) 100—21

*) Մօտաւորապէս 24 միլիոն բուբլի։

Типографія „Экономія“ Азаха Мигранова и С-ми.